Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

1(718)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ ՈՒՐԻՇ

Եղբայրության կամ թե սիրո
Խոսքը ես ձեզ չեմ ավետում, -
Պատգամները չարի, բարվո
Ձեր ոտների տակն եմ նետում:
Կյանքն է պայքա՛ր՝ գոռ ու դաժա՛ն,
Ճզմի՛ր մարդուն և թռի՛ր վե՛ր.
Իրավունքը ուժն է միայն,
Վա՜յ հաղթվածին, հազա՛ր վայեր:
Տեր կամ ըստրուկ պիտի լինիս, -
Ճշմարտություն չըկա ուրիշ:
Չես սպանի, քեզ կսպանեն,
Դու սպանի՛ր, քեզ չսպանեն:
Լուծ կամ լծկան պիտի լինիս, -
Ճշմարտություն չըկա ուրիշ:
Անիծվիս, մա՛րդ, որ հույսդ է մարդ.
Բախտըդ կռվով կռի՛ր ինքըդ:
Մո՛ւրճ կամ զնդա՛ն պիտի լինիս.-
Ճշմարտություն չըկա ուրիշ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ

Հունվարի 18-ին Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը արցախյան շնչով էր հագեցված: «Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ-ի և «ՄՈՒՆՔ» տեխնոդպրոցի նախաձեռնությամբ կազմակերպվել և իրականացվեց «ՄԵՆՔ ԿԱՆՔ» մեծ համերգ-միջոցառումը: Մինչ համերգի սկսելը՝ համալիրի գլխավոր մուտքից դեպի դահլիճներ տանող հատվածում կայացավ ցուցահանդես, որի մուտքն սկսվում էր Արցախի Զինանշանի բնանկարով: Այն իրենից ներկայացնում է մի թևատարած արծիվ, որը կրում է Արտաշեսյանների արքայատոհմի թագը, իսկ գլխավերևում տարածվում են արևի ճառագայթները: Կենտրոնում դրված է վահան, որի վրա պատկերված են Արցախի դրոշը (հորիզոնական դիրքով) և Ստեփանակերտի մոտ գտնվող «Մենք ենք մեր սարերը» («Տատիկ և Պապիկ») հուշարձանը՝ Մեծ Քիրս լեռան ֆոնին: Ներքևի մասում արծվի ճանկերի մեջ խաղողի վազեր են, թթենու պտուղներ, ցորենի հասկեր: Վերևի կիսաշրջանաձև ժապավենի վրա արված է հայերեն մակագրություն՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն-Արցախ»: Զինանշանի հեղինակ Լավրենտ Ղալայանն այցելուներին ներկայացնում էր՝ ինչպես է ստեղծել այն: Արցախյան բազում կազմակերպություններ՝ մշակութային խմբեր, տնտեսվարողներ, անհատներ, որոնք այժմ գործում են ՀՀ-ում, իրենց արտադրանքն էին ներկայացրել նաև վաճառքի համար: Գործում էին սննդի կետեր՝ արցախյան ուտեստներով: Երևանում գործող «Հուսո տուն» բարեգործական հիմնադրամը ներկայացրել էր իր հովանու տակ ստեղծագործող արցախցի երեխաների ձեռքի աշխատանքները, նկարները:

Ցուցասրահի մի հատվածում ներկայացրել էի Արցախի մասին պատմող լուսանկարներ՝ սկսած 1989 թվականից, երբ պաշտպանում էինք Բերդաձորը: Ցուցադրված էին նաև Արցախի պատմական հուշարձանների՝ Դադիվանք, Գանձասար, Ամարաս, Շուշի. Քաշաթաղից Ծիծեռնավանք և այլն, հասարակական-մշակութային կյանքի և Պաշտպանության բանակի մասին պատմող լուսանկարներ: Հարևանությամբ դստերս՝ նկարիչ Անահիտի գեղանկարներն են՝ որոշներն Արցախ ներկայացնող: Շատերը հետաքրքրվեցին ցուցադրածս լուսանկարներով: Իրենց, ծանոթ-բարեկամների, հարազատների գտան լուսանկարներում: Առավել հետաքրքրված էին 90-ականների մասին պատմող լուսանկարներով, որոնցում ցուցադրված էին ռազմական տարբեր ջոկատներ, անհատներ: Որոշներին հանդիպել կամ նույն ջոկատի կազմում մասնակցել եմ մարտական գործողությունների մեր հայրենիքի տարբեր վայրերում՝ Բերդաձոր, Վահան գյուղ, Լաչին-Քաշաթաղ, Արցախի Մարտունու Ույանի բարձունք, Ավետարանոցի մատույցներ և այլուր: Ընթացքում շրջեցի նաև ցուցասրահում, զրուցեցի տաղավարների ներկայացուցիչների հետ: Բոլորն էին գոհ կազմակերպված միջոցառման համար: Ամենակարևորը՝ իրար կարոտած շատ արցախցիներ հանդիպեցին: Իսկ երեկոյան կայացած հիրավի Մեծ համերգը բոլորին մտքով տուն՝ Արցախ տարավ:

Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի հարկի տակ ելույթ ունեցան Արցախի տարբեր մշակութային համույթներ, ինչպես նաև՝ հայաստանյան և արցախյան ճանաչված մենակատարները: Ճանաչված երգիչ, Արցախի մեծ բարեկամ, ազատամարտիկ Դավիթ Ամալյանը ներկայացրեց «Կարոտել եմ» երգը: Հունվարի 18-ին է ծնվել նրա Վարդան որդին, որը 2020թ. ծառայում էր Արցախի Պաշտպանության բանակում և սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի առաջին օրից մարտադաշտում էր: Հերոսաբար զոհվեց նոյեմբերի 7-ին Շուշին պաշտպանելիս, հետմահու պարգևատրվել է «Արիության համար» և «Մարտական ծառայության» մեդալներով: Օրեր առաջ Դավիթի հետ Ստեփանավանում էինք, խոսեցինք կայացող համերգի մասին: Ասաց՝ չէր կարող չմասնակցել նման միջոցառման: Նշեց նաև, որ նույն օրը «Մետրո» թատրոնում կկայանա որդուն նվիրված միջոցառում:

Համերգի յուրաքանչյուր խմբի կամ անհատ կատարողի ելույթ առաջինը հույզեր ու հիշողություններ էր արթնացնում: Նայում եմ շուրջս նստած հանդիսատեսներին, գրեթե բոլորի աչքերն էին թրջված. Տունը՝ Արցախը, կանչում է: Արթուր Խաչենցի «Եկ քինինք Արցախ», Ներսիկ Իսպիրյանի «Ղարաբաղ», Շուշան Պետրոսյանի «Արցախ» կատարած երգերը, պարային խմբերի ելույթները ոտքի էին հանում հանդիսատեսին, դահլիճի տարբեր կողմերում Արցախի եռագույնն էր ծածանվում: Մոտ 3 ժամ տևած համերգը, որ կարևորվեց նաև արցախցիների ևս մեկ անգամ համախմբվելուն, կարծես շուտ ավարտվեց:

☞3

ՄԵՆՔ ԿԱՆՔ. ՔԱՋԵՐԻ ՀՈՂԸ ՄԵԶ Է ՍՊԱՍՈՒՄ...

Մշակույթը ազգի հոգևոր հայելին է:

Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի ճանապարհները չէին բավականացնում՝ տեղավորելու մշակութային այդ կենտրոն շտապող մարդկանց ու մեքենաները:

Կեսօրից սկսած՝ մարդիկ շտապում էին այնտեղ՝ վայելելու արցախյան մշակույթի բացառիկությունները: Առավել անհամբեր էինք մենք՝ արցախցիներս:

Համալիրում տեղակայված տաղավարների սեղանները ճկվում էին մշակութային ցուցանմուշներից, իսկ պատերը հրճվում էին անուշահոտությունից:

Այդ օրը Արցախը «ծանր նստել էր» համալիրում ու անհամբեր սպասում էր իր այցելու զավակներին, որ տարագիր էին դարձել հայրենի երկրում:

Չնայած սառնաշունչ եղանակին՝ բոլորը՝ ծեր ու մանուկ, կին թե տղամարդ, շտապում էին այնտեղ՝ տաքացնելու իրենց հոգիները հարազատ միջավայրում: Համալիրը դարձել էր հսկայական մի մագնիս, որը դեպի իրեն էր քաշում ոչ միայն արցախցիներին: Ո՛չ, արցախյան համեղությունների՝ փախլավայի, գաթայի, ժենգյալով հացի, կուրկուտի զգլխիչ բուրմունքը չէր մարդկանց գերել, որ շտապում էին այնտեղ՝ վայելելու այդ բարիքները: Ինչ-որ գերբնական, աներևույթ ու անբացատրելի մի ուժ հազարավոր թելերով նրանց ձգում էր դեպի իրեն: Այդ անտես ու աննկատ թելերն անցնում էին յուրաքանչյուրի սրտի ու հոգու միջով՝ հաճելիորեն շոշափելով նրանց նուրբ ու զգայական աշխարհը:

Այդ օրը Արցախը մարզահամերգային համալիրի հյուրն էր և սպասում էր իր հանդիսատեսին:

☞2

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ՈՒ ՄԱՂԹԱՆՔԻ

Լրացավ վաստակաշատ մանկավարժ, «Լուսարար» թերթի վստահելի բարեկամ և ակտիվ թղթակից Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆԻ ծննդյան 75-ամյակը: Այդ տարիների հաշվեկշռում մի հագեցած կյանք կա՝ լի երազանքներով, նվիրումով ու մաքառումներով: Նրան հաճախ կարելի է տեսնել կրթագիտական, մշակութային, հասարակական միջոցառումների ժամանակ, որոնց մասին մամուլում և ֆեյսբուքյան իր էջում պարբերաբար հանդես է գալիս յուրատիպ անդրադարձերով: Նրա անունը այսօր էլ արժանի տեղ ունի ստեղծագործական մրցույթների մրցանակակիրների շարքում: Ասել է թե՝ Սուրայա Ղազարյանը հավատարիմ է մնացել այն կարևոր առաքելությանը, որով ամբողջանում է նրա օրինակելի նկարագիրը՝ իբրև կին, մայր, մանկավարժ, լրագրող ու ՀԱՅՐԵՆԻՔԻ նվիրյալ դուստր:

Մեր գործընկերուհուն ավելի ամբողջական ներկայացնելու համար ընտրել ենք օրիգինալ մի ձևաչափ, ըստ որի՝ Սուրայա Ղազարյանը, իր ներսի աչքերով զննելով ինքն իրեն, պատմում է ի՛ր մասին:

Շնորհավոր հոբելյանդ, հարգարժա՛ն Սուրայա Ղազարյան, արևշատություն ենք մաղթում ու ստեղծագործական երկար տարիների կյանք: Թող հաջորդ հոբելյաններդ միասին նշենք հայրենի Արցախում:

Խորին հարգանքով՝
«Լուսարար»-ի խմբագրակազմ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՂԵՐՁ

ԻՆՔՆԱԶՐՈՒՅՑ-ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի ընթերցողներ, ընկերներ, ծանոթ-բարեկամներ, հարազատներ: Այսօր 75-ամյա իմ կյանքի բարձունքից փորձում եմ ձեր առջև անկեղծանալ ու բացել կյանքիս ու հոգուս «հուշամատյանը»՝ թերթելով նրա և՛ ուրախ, և՛ թախծոտ էջերը: Հայտնի խոսք է, որ մարդուն իրենից զատ ոչ ոք չի կարող ավելի լավ ճանաչել: Գուցե ինչ-որ տեղ այս վերլուծությունը շատ անկեղծ ստացվի, ինչ-որ տեղ՝ գուցե անհամեստ, կամ շատ դեպքերում չափազանց զուսպ լինի, հայցում եմ բոլորիդ ներողամտությունը և հորդորում շատ խիստ չլինել «դատելու» հարցում:

Կյանքիս փուլերը
Մանկություն: Ո՞վ եմ ես

Ես՝ Սուրայա Ռուբենի Ղազարյանս, ծնվել եմ 1951թ. հունվարի 27-ին (մայրս 28-ն էր ընդունում), Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղում, ավելի կոնկրետ՝ Ասկերանի բերդից ոչ հեռու գտնվող մի փոքրիկ բնակավայրում, որ նախկինում Միրզաջան էր կոչվում: Այժմ այդ տարածքում բենզալցակայան է տեղադրված:

Նախ անվանս ծագման մասին, որը ողջ կյանքում հետապնդել է ինձ (երբեք չեմ սիրել այդ անունը): Քիրվայության ժամանակներն էին, և հաճախ էր մեր քիրվան (թուրք ծանոթ) լինում մեր ընտանիքում: Իմ ծննդյան գիշերը մեր տանն է լինում: Կնոջ հետ 15 տարվա ամուսնության ընթացքում երեխաներ չեն ունեցել: Այդ գիշերը նա խնդրում է հորս նորածին աղջկան (ինձ) կոչել Սուրայա և խոստանում, որ իմ ամուսնության ժամանակ օժիտիս բուրդը ինքն է նվիրելու: Անցան շատ տարիներ, բայց մեր քիրվան այլևս չերևաց, ու խոստումն էլ այդպես մնաց օդում: Անվանս հետ հաշտ լինելուն չէր օգնում անգամ ադրբեջանական ռադիոյով հաճախակի հնչող «Սյուրայա» երգը, որ նվիրված էր հարևան պետության սոցիալիստական աշխատանքի հերոսուհի Սյուրայային (նա բամբակագործ աղջիկ էր): Միևնույն է, ես ողջ կյանքում չսիրեցի այդ անունը՝ չնայած նրան, որ հետո պարզեցի՝ ոչ թե ադրբեջանական, այլ պարսկական ծագում ունի անունս: Հետագա տարիներին շատ եմ փորձել փոխել այն, սակայն ծնողներս համոզել են, որ մարդիկ արդեն ինձ այդ անունով են ճանաչում:

1957 թվականին Ասկերանում կառուցվում է մեր նոր տունը, ու մենք տեղափոխվում ենք այնտեղ (Ասկերանի առաջին բնակիչներից էինք): Իմիջիայլոց, Ասկերանի տարածքը նախկինում նախատեսված է եղել հենց Քյաթուկի բնակիչների համար, որոնք սարից իջնում էին՝ նպաստավոր բնակավայրում ապրելու համար, մանավանդ որ այդ գյուղում խմելու ջրի խնդիր կար (աղի էր ջուրը):

Ծնողներս աշխատավոր մարդիկ էին, քարի ու հողի հետ կռիվ տվող:

Հայրս՝ Ռուբեն Իշխանի Ղազարյանը, Քյաթուկից էր, որը հնում շատ զարգացած ու հայտնի գյուղ է եղել Վարանդայում: Այդ բնակավայրից է սերում նաև հայտնի մեծահարուստ, բարերար Միքայել Արամյանցը, որի տոհմից էր հորական տատս՝ Սոնա այան (նախկինում մենք տատիկին այա էինք կոչում):

Մայրս՝ Մանյա Գրիգորի Արզումանյանը, ծագումով Խրամորթ գյուղից էր (Ասկերանի շրջան): Մորական պապս գյուղի կոլխոզի նախագահն էր, որը Հայրենական մեծ պատերազմի տարիներին կամավորագրվել է, մեկնել ռազմաճակատ, զոհվել հանուն հայրենիքի ու մնացել անհայտության մեջ առայսօր: Հետո մահացել է և մորական տատս՝ Սիրան մայրիկը՝ վեց որբերին թողնելով 16-ամյա մորս ուսերին:

Մանկությունից հաճախ էի լսում հորիցս, որ Վարանդայի բնակիչներն ավելի զարգացած են, քաղաքակիրթ, քան խաչենցիները (Խաչենի մելիքություն), ու հաճախ էր ձեռ առնելով ասում՝ խըչընեցուց խելք չօնին…

Մայրս շատ բանիմաց կին էր, որին, սակայն, բախտ չէր վիճակվել շարունակել ուսումը դպրոցն ավարտելուց հետո: Շատ ընթերցասեր կին էր, կարդացել էր մեր բոլոր պատմավեպերը և անգիր գիտեր մեր պատմության կարևոր անցքերը: Նրա բառապաշարը համեմված էր մեր ժողովրդական բառուբանով, իմաստախոսություններով և կարող էր մրցել ցանկացած բուհ ավարտածի հետ: Հաճախ էր ինձ հարցեր տալիս՝ ստուգելու գիտելիքներս և գոհ էր մնում հիմնականում: Մորիցս բնավորության շատ գծեր եմ ժառանգել՝ անկեղծություն, շիտակություն, ազատամտություն, համառություն, ցանկացած անելանելի վիճակում սթափություն ու ինքնատիրապետում, բարեսրտություն, ամենասուղ պայմաններում անգամ ուրիշներին ձեռք մեկնելու կարողություն, քաջություն, զսպվածություն, դժվարությունները լուռ հաղթահարելու կարողություն, ծով համբերություն և այլն: Ըմբոստությունս նույնպես նրանից ժառանգած «օժիտ» է:

☞ 3

ՄԵՆՔ ԿԱՆՔ. ՔԱՋԵՐԻ ՀՈՂԸ ՄԵԶ Է ՍՊԱՍՈՒՄ…

1 ☞ Կարոտ, ցավ, վիշտ, հուզմունք, հույս, հավատ, սպասում, խնդում, ծանոթ ու հարազատ մարդկանց հանդիպելու բուռն մղումներ, մխիթարիչ ու սրտակից խոսք լսելու անհագուրդ ծարավ, երկարատև բաժանման ցավը, կարոտը մեղմելու փափագ, կորուստների ցավից դատարկված հոգիները ընկերակցությամբ թեթևացնելու ակնկալիքներ… Ի վերջո, մայրենի բարբառը վայելելու երջանիկ հնարավորություն: Հոգեկան այս բազմաշերտ տվայտանքների պատճառով էր, որ արցախցիները շտապում էին համալիր՝ հանգցնելու այն հոգեխորով կրակը, որ երկու տարուց ավելի այրում էր նրանց սրտերը: Թվում էր՝ Վերադարձի հրահանգ էր տրվել Վերևից…

Մենք կանք: Այո՛, մենք կանք: Ոչ պատահականորեն ընտրված խորագիր, որ լավագույնս է ներկայացնում մեր հավաքական ու համախումբ կամքը: Մարզահամերգային համալիրում «Մենք կանք» մշակութային միջոցառումն էր՝ Արցախի գրեթե բոլոր մշակութային կոլեկտիվների ընդգրկմամբ, որի նախաձեռնությունը պատկանում էր «Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ-ին և «Մունք» տեխնոդպրոցին: Միջոցառմանը մասնակցում էին նաև հայաստանյան մշակութային կոլեկտիվներ:

Ժամեր շարունակ վայելում էինք Արցախի ներկայությունը՝ չնայած որոշ արգելքների:

Երբ հնչեց Արցախի երախտավոր զավակ Գուրգեն Գաբրիելյանի հանրահայտ «Հորովել»-ը, արցունքի փոխարեն արյուն հոսեց մեր աչքերից ու անցավ մեր սրտերի միջով: Հուզմունքը զսպել հնարավոր չէր…

Իրիքնակը տյուս ա եկալ,
Տանս յրան լյուս ա եկալ,
Սօր մին կորե վեր վար անինքյ,
Գյիդա՝ սրտես հույս ա եկալ…
Հո ըրա, հո, ապուն մատաղ,
Ապուն դալու կուճիր հոտաղ,
Հո ըրա, հո, հո, հո, հո …

Արցախյան մի ողջ կոլորիտ, որ տարավ մեզ դեպի այն կարոտաբաղձ հեռուները, որի քաղցով տոչորվում են մեր սրտերը:

Ծերքետ ճպատը ճապկե ա,
Պենդ չի թխիս եզանը,
Բյուրդան մաշկեն ցավ կտա,
Էտ ա պահում խեզանը…

Ահա սա է արցախցու ողջ էությունը, որ խտացված է յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր բառում: Սրտացավությունն է գլխավոր բաղադրիչը, որ հոսում է մեր արյան միջով: Հենց դրանով էլ մենք տարբերվում ենք ուրիշներից: Բոլորս սպասում ենք մի Հրաշքի, թե «հի՞բ տյուս կկյա էդ իրիքյնակը» (ե՞րբ դուրս կգա այդ արեգակը)…

Մենք կանք: Բոլոր համարները համահունչ էին օրվա խորհրդին ու կատարվում էին բարձր վարպետությամբ:

Արցախցի Այաների իմաստուն մտքերով հասանք մեր դրախտային երկիրը, որ դարձել է «սուրբ նշխար՝ շան բերանում»: Արթուր Խաչենցի երգով գնացինք Արցախ, որ «խմինք էն ճիրան, սերտս հուվանա, ցավես տիմանա…»: Ցավ, որ բուժում չունի առայժմ: Ասում են՝ ժամանակը բուժում է վերքերը: Ժամանակը երբեք էլ լավ բժիշկ չի եղել ու չի էլ լինելու:

Լեփ-լեցուն դահլիճի որոտընդոստ ծափերը չէին դադարում: Կատարվող երգերի ու պարերի հետ միասին երգում ու պարում էին հանդիսատեսները՝ անկախ տարիքից (երբևէ այսքան ուրախություն չէր տեսել մեր ժողովուրդը տեղահանությունից ի վեր): Հրճվանքը հաղթել էր ցավին: Ծածանվում էին ՀՀ և Արցախի դրոշները մանուկների բացականչություններով: Ապրում էր Արցախը Շուշան Պետրոսյանի, Ներսիկ ու Արաբո Իսպիրյանների, Դավիթ Ամալյանի, Արսեն Գրիգորյանի (Մրո), Վարդան Բաղալյանի, Լյոկայի և մյուսների երգերում, Արա Գևորգյանի «Արցախ» երաժշտության անմոռաց նոտաներում, նահիրյան աղջիկների հեզաճկուն պարերում, սեգ ու խրոխտ երիտասարդների հայրենապաշտպան շարժուձևի մեջ:

Մենք կանք Հրաչյա Բեգլարյանի «Ղարաբաղցին» երգի տողերում՝ միշտ հյուրասեր ու միշտ բարի, արդարադատ, աղուհացի գինը գնահատող: Մենք կանք փոքրիկ Միշայի (այժմ՝ արդեն մեծ) կատարումներում («Փոքրիկ ղարաբաղցին»), Աշոտ Բաբայանի դպրոցի ավանդույթները շարունակող Ռաուլ Բաբայանի սաների՝ աշխարհ սասանող հպարտ պարերում: Մենք կանք նաև Արցախի

խոհանոցի ավանդույթներում, արվեստի ու արհեստի տարբեր ճյուղերում:

Ուր էլ լինես, իմ բարեկամ,
Դու նրա հետ ընկերացիր,
Լավ ընկերոջ համար անգամ
Կյանքը կտա ղարաբաղցին…

Ճակատագրի քամահրանքով տունուտեղից զրկված բազմավաստակ ղարաբաղցին էլի կվերագտնի արարելու իր կամքը, կստեղծի նորը չնչին իսկ հնարավորության դեպքում:

Մենք կանք: Ժամերը առատորեն հոսում էին մեր արցունքների պես, ու վայելում էինք երեկոն՝ տեղահանությունից ի վեր երբևէ այսքան մոտիկ մարդկանց ներկայություն չունենալով: Այդ պահին բոլորս ուժեղ ու երջանիկ էինք զգում մեզ: Ահա թե ինչ գին ունի համախմբումը:

Ամիսներ շարունակ դա մեզ հզոր լիցքեր է հաղորդելու՝ բարձրացնելով մեր ընկճված ոգին:

Մենք կանք… Դա մշակութային մի հրավառություն էր, տոն, որն ուներ հստակ մի ուղերձ՝ Վերադարձ:

Մարզահամերգային համալիրում տեղի ունեցածը երջանիկ առիթ էր՝ իրար զգալու, մոտ լինելու, իրար հետ շփվելու, Արցախը լիովին զգալու համար: Թերևս երախտագիտության բոլոր խոսքերը ի զորու չէին լինի՝ արտահայտելու արցախցիների հոգեկան այն բավարարվածությունը, որ ունեցան այդ երեկոյին:

Շնորհակալություն բոլոր երախտավորներին, որոնց շնորհիվ կազմակերպվեց ու իրականություն դարձավ այդ հրաշալի տոնը, որոնց շնորհիվ կորած սրտերը գտան իրար…

Մենք կանք ու լինելու ենք, ինչ էլ որ պատահի: Արցախը ավազ չէ, որ քշվի ամեն մի պատահական քամուց: Հազարամյակների պատմություն ունեցող Արցախը չի կարող ինչ-որ խաշնարածների կամքով ջնջվել պատմությունից: Մեր պատմության վայրիվերո ճամփաներով մենք հաճախ ենք անցել, սակայն երբեք չի մարել այն կրակը, որ տրված է մեզ ի վերուստ… Մենք կանք ու լինելու ենք պատմության շարունակականության բոլոր խաչուղիներում: Քանի կա արցախցու արարող կամքն ու ոգին, արհավիրքներն անզոր են նրա դեմ:

«Մենք կանք» տոնական օրվա պարգևած հաճելի տրամադրությունը նոր խոհեր ու մտորումներ է արթնացնում մեր հոգում: Ցավն ու վիշտն էլ հավերժական չեն, կան ավելի մնայուն արժեքներ, որոնց համար էլ մենք պիտի ապրենք: Այսօր չկա, գու՞ցե լինի Վաղվան Վաղը…

Մի բան պարզ է. մենք կանք, քանի դեռ չի մարել Վերադարձի հույսի կանթեղը, քանի դեռ թարմ են մեր նահատակների շիրիմները, քանի դեռ մեր հոգում վառ են հայրենական տան բոլոր հիշատակները, քանի դեռ կանչում են մեր ննջեցյալների հոգիները… Մենք կանք, քանի դեռ մայրենի բարբառով են կարկաչում մեր աղբյուրներն ու գետերը, քանի դեռ հարազատ հովերն են համբուրում մեր խրոխտ լեռները, քանի դեռ հայի հետքերն են կրում մեր լքված վանքերն ու եկեղեցիները, ծորերն ու անտառները, ճամփաներն ու դաշտերը, քանի դեռ մեզ կանչում է պապենական հողը: Մենք կանք, քանի դեռ կենդանի է մեր ոգին, ու հնչում է մեր երգը, քանի դեռ ապրում են մեր մշակույթը, մայրենի բարբառը:

Թող նման տոնախմբությունները հաճախակի կազմակերպվեն, ու աշխարհն իմանա, որ մենք կանք, եղել ենք ու կլինենք:

Երախտապարտ ենք այն մարդկանց, որոնց ջանքերով իրականություն դարձավ այդ գեղեցիկ տոնը: Ցրտաշունչ այդ օրը ջերմացան մեր պաղ սրտերը, ու հոռի մտքերը տեղի տվեցին:

Դա մեր պայքարի սկիզբն էր՝ մշակույթի միջոցով:

Սպասենք հաջորդ երանելի օրվան:

Սուրայա ՂԱՋԱՐՅԱՆ

ՆՈՐ ՍԿԻԶԲ

ՎԵՐԱԾՆՎԱԾ ՀԱՄՈՒՅԹԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԵՐԳԸ

Հունվարի 23-ին Երևանում՝ Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի մեծ դահլիճում, համերգով հանդես եկավ «Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթը: Արդեն 37-ամյա պատմություն ունեցող համույթը 2023թ. ողբերգական դեպքերից հետո բռնի տեղահանվել էր հայրենի Արցախից: Թվում էր՝ արդեն վերջ՝ համույթն այլևս չի կարող գործել: Սակայն Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպությունը, ինչպես աջակցեց Արցախի մի շարք մշակութային կառույցների, այնպես էլ իր հովանավորության տակ առավ մանկապատանեկան համույթը: «Դիալոգ»-ի նախագահ Յուրի Նավոյանի և համույթի գեղարվեստական ղեկավար Գայանե Հարությունյանի հանդիպումից հետո «Արցախի բալիկներ»-ը վերակազմավորվեց և սկսվեցին պարապմունքները: Եվ ընդամենը 2 ամիս անց «Արցախի բալիկներ»-ը Երևանում բեմում են: Մինչ համերգի սկսելը՝ հաղորդավարը հակիրճ ներկայացրեց համույթի անցած ճանապարհը:

«Արցախի բալիկներ» մանկապատանեկան համույթը կազմավորվել է Արցախի համար բարդ ու պատերազմական շրջանում՝ 1989 թվականին՝ Սերգեյ Հարությունյանի ջանքերով: Ժամանակին համույթի կազմում են իրենց երաժշտական առաջին քայլերը կատարել Անդրեն, Ռազմիկ Ամյանը, Վարդան Բաղալյանը, Պարույր Գրիգորյանը, Տաթևիկ Բալայանը, այլք: 1994թ. «Արցախի բալիկներ»-ին է միացել կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանցը, որի ստեղծագործությունները հեղնայուն են դարձել համույթի հետագա գործունեության համար: Բելգիայի «Ամադեուս» ստեղծագործական կազմակերպության նախաձեռնությամբ Ստեփանակերտում կազմակերպված պատանի երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոնին մասնակցելով՝ համույթն արժանացավ «Գրան-պրի» մրցանակի և ոսկե մեդալի՝ Էդ. Ղազարյանցի «Իմ Ղարաբաղ» ստեղծագործությամբ, Գայանե Հարությունյանի խմբավարմամբ: Գ. Հարությունյանը, ով 1998-ից համույթի խմբավարն էր, 2008-ին նշանակվեց գեղարվեստական ղեկավար: «Արցախի բալիկներ»-ն այդ ժամանակվանից համերգներով հանդես է եկել նաև արտերկրում: Իր խոսքում համույթի գեղարվեստական ղեկավար Գ. Հարությունյանը, հակիրճ ներկայացնելով համույթի անցած ուղին, նշեց. «Այսօր այս ամենը հնարավոր չէր իրագործել առանց մի մարդու, ով հավատաց, վստահեց մեզ և հնարավորություն ստեղծեց՝ նորից հնչի «Արցախի բալիկներ»-ի ձայնը»: Շնորհակալություն հայտնեց Յուրի Նավոյանին, ով կանգնած է Արցախի մշակութային խմբերի ու անհատների կողքին ու աջակցում է նրանց վերակազմավորվել ու շարունակել գործել: Նաև շնորհակալագիր հանձնեց աջակցին՝ «Արցախի բալիկներ»-ի կողմից հայտնելով երախտագիտություն: Ներկաներին ողջունեց նաև Յուրի Նավոյանը՝ ասելով. «Մեծ ճանապարհի սկզբին ենք, ու «Արցախի բալիկներ»-ի առաջին ելույթն է, որը հուզիչ արարողություն է և մեծ հույզեր է պարունակում: Երեկոն նաև առանձնահատուկ խորհուրդ էլ ունի, որովհետև այսօր ելույթ է ունենալու մի սերունդ, որը ծնունդ է առել 5- 10-15 տարի առաջ՝ Արցախի մայր հողում: Եվ ծնված օրից ներծծված է Արցախյան բազմադարյան մշակույթով, բառ ու բանով, կոլորիտով: Իսկ յուրաքանչյուր բալիկ Արցախյան յուրահատուկ պատմական կոդ է՝ հասկանալու մեր պատմությունը, մեր ներկան ու ապագան՝ լուսավոր հայացքով: Ինչո՞ւ, քանի որ նրանք կապող օղակ են, կամրջող են սերունդների միջև՝ սկսած 1989 թվականից: Եվ երկրորդ՝ նրանք կապող օղակ են Արցախի ժամանակակից պատմության տարբեր փուլերի: Պատահական չէ, որ վերակազմավորված «Արցախի բալիկներ»-ի երևանյան ելույթն սկսվում է «Արցախի կանչը» խորագրով՝ իր քաղաքական, պատմական առումով»: Յու. Նավոյանը նաև շնորհակալություն հայտնեց Գ. Հարությունյանին՝ իրենց համագործակցության ու նվիրումով աշխատելու համար: Համերգն սկսվեց «Ղարաբաղի հորովել» երգով: Ընթացքում հնչեցին նաև «Ղարաբաղցին», «Կալի երգ», «Խբեցե, հրեցե», «Աղե արկանք», «Հընրսանեք», «Դերունց ծորում», «Նախշուն բաջի», «Կենաց երգ», «Ճեղաց», «Հընգեր», «Մեր գյուղը», «Ղարաբաղ իմ», «Արցախ» և այլն: Համերգին ներկա էին ՀՀ Թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, «Արցախ» ջազի գեղարվեստական ղեկավար Տիգրան Լալայանը, Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղ. ղեկավար Ռուզաննա Խաչատրյանը, Էդ. Ղազարյանցի հարազատներ, մշակույթի այլ գործիչներ, արցախցիներ, հյուրեր: Հանդիսատեսը մեծ ոգևորությամբ ըմբոշխնեց արցախցի մանուկների ելույթը: «Դիալոգ»-ի աջակցությամբ թատրոնի ճեմասրահում կազմակերպվել էր նաև արցախցի ստեղծագործողների ձեռքի աշխատանքների ցուցահանդես-վաճառք:

«Արցախի բալիկների»-ի ձայնը դեռ պետք է հնչի տարբեր բեմերում՝ ավետելով աշխարհին, որ կա մի փոքրիկ երկիր, որի բալիկներն էլ կոչվում են «Արցախի բալիկներ»:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ

1 ☞ Համերգից հետո էլ շատ այցելուներ հետաքրքրվեցին դեռևս պահպանված ցուցադրություններով: Մինչ միջոցառման կայացումը, լուսանկարների ցուցադրությունը կազմակերպելու համար հանդիպեցի «Արցախյան մշակույթի պահպանման կենտրոն» ՀԿ նախագահ Ապրես Մարգարյանին, որի հետ դեռ ծանոթ եմ Արցախից: Կարևորվեց նաև լուսանկարների, Արցախի տարբեր բնակավայրերի մշակույթի դպրոցների, կենտրոնների սաների ձեռքի աշխատանքների, նկարների ցուցադրությունը: Միջոցառման կազմակերպիչներից Աշոտ Ավանեսյանը, օրվա հետ կապված, իր ֆեսբուքյան էջում նախօրոք գրել էր. «Ավելի քան 10 մշակութային կոլեկտիվներ տեղահանությունից հետո սկսել են ստեղծագործել ՀՀ-ում: Նրանցից շատերը իրենց հետ տարհանել են բեմական հագուստն ու երաժշտական գործիքները և դժոխքի միջով անցնելուց ընդամենը 10 օր անց՝ արդեն բեմի վրա էին»: 2023թ. սեպտեմբերի վերջերին բռնի տեղահանված արցախցիները շատ բան չէին կարող վերցնել հետները: Ու մշակույթի մարդիկ առավել կարևորել են հենց մշակութային իրերը: Այժմ Երևանում իրենց գործունեությունն են շարունակում նաև Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, «Արցախի բալիկներ» համույթը, «Արցախ» ջազը, որոնց վերակայացումը հովանավորել է «Դիալոգ» հասարակական կազմակերպությունը:

Օրվա ընթացքում հանդիպեցի արցախցի շատ մտավորականների, պետական ու քաղաքական, հասարակական գործիչների, որոնց հետ ծանոթ էի Արցախից: Հիշում ենք անցած օրերն ու ցավում ներկա վիճակի համար: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին հիմնադրամ»-ի նախագահ, Արցախի մեծ բարեկամ Գուրգեն Մելիքյանը համերգին եկել էր ընտանիքի հետ: Շատ կարևորեց կայացող միջոցառումը: Սպասենք հաջորդ համախմբմանը:

Ջ. ԸՌՔՈՅԱՆ

ԻՆՔՆԱԶՐՈՒՅՑ-ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2 ☞ Ողջ կյանքը ընտանիքին ու վեց զավակներին (4 տղա, 2 աղջիկ) նվիրաբերած մայրս միշտ մնաց չգնահատված ու կանացի երջանկությունից զուրկ մի էակ: Շատ դառնություններ տարավ, երկու որդիների կորուստ տեսավ (20 տարեկան, 28 տարեկան), Արցախյան առաջին պատերազմի ծանր տարիները «ճաշակեց» և 75 տարեկան հասակում լքեց երկրային կյանքը ծանր հիվանդության պատճառով՝ խոր ցավ պատճառելով բոլորիս: Կրթության, գիտության, ընտանիքի մասին նրա բոլոր երազանքները ես փորձել եմ իրագործել՝ ողջ կյանքում ուղեկցվելով նրա բարի և իմաստուն խորհուրդներով:

Հորիցս ժառանգել եմ (չզարմանաք) խռովկանությունը, ամեն չնչին բանից շուտ վիրավորվելու հատկությունը և իրասածի լինելը: Շատ պարզ հիշում եմ, որ մանկությանս տարիներին շատ շուտ վիրավորվում էի ու խռովում (առաջինը ես չէի հաշտվում), կամ եթե ինչ-որ բան էի ուզում, մինչև նպատակիս չհասնեի, չէի խաղաղվում:

Հայրս նահապետական սովորություններով ապրող, խիստ բնավորություն ունեցող մարդ էր և ուզում էր, որ միշտ իրենը պնդի, իսկ մայրս առաջադիմական հայացքներ ուներ ու զիջում էր նրան:

Իմ պատկերացումները դպրոցական կրթության մասին

Ո՞վ է կարևոր դեր խաղացել իմ կյանքում

1958 թվականին հաճախել եմ Ասկերանի 8-ամյա դպրոցի առաջին դասարան: Առաջին ուսուցչուհիս եղել է երջանկահիշատակ Հասմիկ Նահապետյանը, որը խոր հետք է թողել իմ հետագա կյանքում: Մաշտոցյան գիրը ծաղկում էր նրա հրաշագործ ձեռքերի տակ: Շատ սիրուն ձեռագիր ուներ և նույնը պահանջում էր իր սաներից: Համբերատար ու նվիրյալ ուսուցչուհի էր, չէր զլանում կամ հոգնում մի բանը հազար անգամ կրկնելուց: Ոչ միայն գեղեցիկ էր գրում, այլև նկարելու, ասեղնագործելու մեծ ձիրք ուներ, ինչն էլ փոխանցել է մեզ: Նկարչության ժամին գրատախտակին նրա նկարած ծիտը մեզ թվում էր՝ ուր որ է կթռչի նրա ձեռքի տակից: Վառ հիշում եմ մի դեպք: Գեղեցիկ ձեռագրերի ցուցահանդես էր կազմակերպված, և նա որոշել էր իմ գրավոր աշխատանքը ներկայացնել: Դասերից հետո հրավիրեց իրենց տուն, գնացի: Երկու-երեք անգամ գրեցի, չհավանեց: Տակիս բարձեր դրեց, որ սեղանն ինձ համար հարմար լինի, ու ստացվեց իր ուզածի պես: Նրա կերպարը մինչ օրս փարոսի պես լուսավորում է իմ հիշողության անդաստանները: Հենց նրա շնորհիվ ես մանկուց որոշեցի մանկավարժ դառնալ ու փայփայեցի այդ նվիրական երազանքը մինչև դպրոցն ավարտելը: Ընկեր Նահապետյանը մի լուսավոր աստղ դարձավ իմ հուշերի երկնակամարում: Եթե դառնալ մանկավարժ, ապա միայն նրա նման նվիրյալ ու անձանձիր:

Միջին դասարաններում, երբ ավելացան նոր առարկաներ (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն ...) , դրանք դասավանդում էին բառիս բուն իմաստով «չոր» մանկավարժներ, ինչի պատճառով էլ կորցրի հետաքրքրությունս այդ առարկաների հանդեպ ու հակվեցի դեպի հումանիտար գիտություն:

Անցյալ դարի 60-ականներին Ասկերանի 8-ամյա դպրոցը հմուտ ղեկավար, լուսահոգի տնօրեն Մանյա Ղուլյանի շնորհիվ հռչակված էր որպես լավագույն կրթօջախ՝ իր նվիրյալ մանկավարժներով: Որոշեցի ընդունվել Շուշիի մանկավարժական տեխնիկում, փաստաթղթերս պատրաստեցի՝ նպատակ ունենալով նաև անվանափոխություն կատարել: Մի օր հայրս աշխատանքից վերադարձավ և հայտարարեց, որ չեմ գնալու Շուշի, այնտեղ շատ թուրքեր կան... Երազանքս մնաց օդում:

1966թ. տեղափոխվեցի Խանաբադի (հետագայում՝ Խնապատ) միջնակարգ դպրոց՝ կրթությունս շարունակելու: Այդ շրջանում ուսման հանդեպ հետաքրքրությունս 100 տոկոսով կտրուկ շրջադարձ կատարեց: Սկսեցի շատ լավ սովորել ու շատ կարդալ հանձնարարված ու չհանձնարարված արտադասարանական ու ծրագրային գրականություն: Անկեղծ լինեմ ու խոստովանեմ, որ իմ լավ սովորելուն նպաստել է նաև Ասկերանի տնօրեն Մանյա Ղուլյանի աղջկա՝ Ռաիդայի հետ ընկերությունը: Ամեն օր միասին էինք դպրոց գնում և դասերից հետո միասին էինք դաս սովորում, մի օր՝ մեր տանը, մի օր՝ իրենց տանը: Ցավոք, դպրոցն ավարտելուց հետո ես նրան այլևս չտեսա: Ընդունվեց Երևանի բժշկական ինստիտուտ, ամուսնացավ սփյուռքահայի հետ ու տեղափոխվեց ԱՄՆ՝ այլևս հնարավորություն չունենալով երբևէ հայրենի տուն վերադառնալ:

☞5

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԻ «ԵՏԵ» ԽԵԼՔԸ *կամ* ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ...

Այս հարցազրույցը Արցախյան շարժման առաջամարտիկ, գրող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, երջանկահիշատակ **Վարդան ՀԱԿՈԲՅԱՆԻ** հետ արվել է 2016 թվականին՝ ապրիլյան պատերազմից հետո: Ցավոք, 2016թ. «Լուսարար»-ի էլեկտրոնային տարբերակը չի պահպանվել թերթի կայքում, բայց բարեբախտաբար նյութերի մի մասը մնացել է մեր արխիվում, որոնցից մեկն էլ հիշյալ հարցազրույցն է: Կարծում ենք՝ նրանում բարձրացված հարցերը չեն կորցրել այժմեականությունը:

- Պարոն Հակոբյան, ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության տևական «սառեցման» ֆոնին քառօրյա պատերազմը օրինաչափությո՞ւն եք համարում, թե՞ դա արտաքին ուժերի հրահրումով էր:

- Թշնամու պահվածքը, բնույթը, որակը, տեսակը մշտապես մեզ պահում են այն մտքի վրա, որ ուր որ է՝ հարձակումը պետք է տեղի ունենա: Խորհրդային տարիներին, երբ կեղծ բարեկամության քարոզներով էինք «կապված», թուրքը դարձյալ սպանում էր, գողություն էր անում: Դա նրա էությունն է: Այս առումով ապրիլյան ահաբեկչությունն օրինաչափ երևույթ եմ համարում: Իսկ ինչ վերաբերում է արտաքին հրահրմանը, հորդորներին, ապա դա ևս չի բացառվում: Ադրբեջանի բերանում լեզու դնողը Թուրքիան է, մուսուլմանական մի շարք պետություններ, որոնք դրդում են նրան նման քայլերի:

Ռուս-թուրքական հարաբերությունները լարված են հիմա: Սիրիայում Ռուսաստանը վերջերս մեծ դերակատարություն ունեցավ: Թուրքիան, որ Սիրիան դիտում է որպես իր սահմանների ծավալման պոտենցիալ տարածք, Ռուսաստանից վրեժ լուծելու նոր ճակատ է Արցախում բացում, և Ադրբեջանի ղեկավարությունը ենթարկվում է այդ սադրանքներին՝ չմտածելով իր ժողովրդի մասին:

Փաստորեն ապրիլի սկզբին նոր եղեռնի փորձ էր մեր ժողովրդի նկատմամբ, որի ակունքում դարձյալ Թուրքիան է: Միայն մեզ հետ չեն այդպես վարվել: Այսօր քուրդն է զոհ գնում այդ երկրում: Վուդրո Վիլսոնը անցյալ դարի 20-ական թթ. իր Իրավարար ծրագրով հանդես գալով՝ թուրքերին անվանել է ավազակախմբեր: Եվ հիմա, երբ արդեն Իսլամական պետությունն է Սիրիայի դեմ պատերազմ սկսել՝ ցանկանալով նրա հողերում պետություն հիմնել, առաջնորդվում է թուրքերի օրինակով: Չէ՞ որ երեկ էլ, նրանից առաջ, նույն ձևով թուրքերն են վարվել, ամրացել մեր հողերում: Նրանք հիմա և՛ պետություն են, և՛ անգամ ՄԱԿ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ են: Անցյալ դարի 18-20-ական թվականներին էլ Ադրբեջանն է իբրև պետություն կազմավորվել Լենինի թեթև ձեռքով: Ազերիները սկզբում ներկայանում էին իբրև Կովկասի թաթարներ: Եվ միայն 1936թ.՝ Ստալինի հատուկ հրամանով կոչվեցին ադրբեջանցիներ... Այն ժամանակ Ադրբեջանը մի շարք ազգեր միավորող «պետություն» էր:

Մի «ազգ», որի անվան կնքահայրը Լենինն ու Ստալինը լինեն, նրա տեղը միայն դամբարանն է. Լենինի մոտ:

- Ամեն մի իրադարձություն, հատկապես եթե այն ծանր հետևանքներ է թողել, որոշակի դասեր է պարունակում: Ո՞րն է, Ձեր կարծիքով, ապրիլյան պատերազմի գլխավոր դասը:

- Ապրիլյան ահաբեկչությունը (այո՛, պատերազմ չէր դա) մեկ անգամ ևս մեզ ապացուցում է, որ մեր ժողովուրդն անպարտելի է: Սա ես չեմ ասում որպես ինքնագովություն մեր ազգի, մեր ժողովրդի: Սահմանի վրա կանգնած մեր 18-20 տարեկան տղաները հերոսություն են կատարել: Նրանք մինչև իրենց արյան վերջին կաթիլը պայքարել են: Անգամ եթե փամփուշտը չի հերիքել, նրանք գոտեմարտի են բռնվել, թշնամուն տապալել: Եվ եթե նրանք իրենցով կենդանի պատ չստեղծեին, մեծ ավերներ կլինեին: Փառք մեր զինվորին: Բայց կա նաև հարցի մյուս կողմը: Ինչո՛ւ մենք անակնկալի եկանք՝ անակնկալի չգալով հանդերձ: Ինչո՛ւ չկանխվեց դա ժամանակին:

Այո, մեր առավելությունները մենք լավ գիտենք, բայց առավել հստակ պիտի տեսնենք նաև մեր այն բացասական կողմերը, բացթողումները, որոնք պետք է շատ արագ վերացնել: Ուրիշի չդիմեմ: Թույլ տվեք ինքս ինձ հետ մի քիչ խոսել: Որտե՞ղ ես անզգույշ եղա, որ նենգաբարո թշնամին երես առավ, ինչո՞ւ միայն ժամեր հետո սահմանապահի ահազանգը տեղ հասավ, ինչո՞ւ բոլորս պատրաստ չէինք նման սադրանքի, չէ՞ որ դա սպասելի էր ամեն վայրկյան...Ինչու՞ ես չեմ կարողացել, թերևս, անկախության տարիներին, իմ պետությունը, իմ երկիրը գերժամանակակից միջոցներով զինել այնպես, որ նրա հետ ստիպված լինեն հաշվի նստել և՛ նենգ թշնամին, և նույնիսկ մեծ տերությունները: Թեև, ի վերջո, մեր ունեցած սպառազինությունն այսօր էլ հերիք է ամբողջ Ադրբեջանը հողի երեսից ջնջելու համար:

Որպես դաշնակից՝ Ռուսաստանն իրեն վերստին չդրսևորեց արժանի ձևով, նա մեր պատմության քառուղիներում մշտապես տմարդի է գտնվել մեր հանդեպ, ինչպես, ասենք, Արևմտյան Հայաստանի հարցում, և նորից նույն վերաբերմունքը դրսևորում է: Եվրասիական տնտեսության անդամ երկրների վարչապետների հերթական նիստը պիտի լիներ Երևանում, չեղավ, վայրը, իբր ապրիլյան ահաբեկչությունների պատճառով, տեղափոխվեց Մոսկվա, որ Ադրբեջանը հանկարծ այդ հավաքին «ծուռ աչքով» չնայի, չնեղանա, մանավանդ այդ հարցում կարևորվեց հայերիս հանդեպ միշտ «ձախ» տրամադրված Ղազախստանի ձայնը: Այսինքն՝ նորսուլթանիզմը: Եվ մի քանի օր դրանից հետո Ռուսաստանի և Հայաստանի անվտանգության ոլորտի ղեկավարների նիստը, որ կայացավ Երևանում, որևէ հայտարարությամբ հանդես գալուց հրաժարվեց: Ասել է թե՝ քամահրանքով են մոտենում Հայաստանին, որը, ինչ խոսք, շատ վիրավորական է: Եվ ահա որոշ ժամանակ անց Բաքվում կայանում է քաղաքակրթությունների ընդլայնված ֆորում: Թե վայրենաբարո Ադրբեջանն ի՞նչ կապ ունի քաղաքակրթության հետ, մնում է աբսուրդ: Երբ ԻՊ-ն է ահաբեկչություններ կատարում, աշխարհի մեծ տերությունները միաբանվում են այդ պետությունը ոչնչացնելու համար, երբ այդ ահաբեկչությունը Ադրբեջանն է անում, բավարարվում են լավագույն դեպքում մեկ-երկու հայտարարությամբ:

Մենք պիտի այս ամենից ճիշտ հետևություններ անենք՝ դառնանք այնպիսի տերություն, որ ստիպված լինի աշխարհը մեզ հետ հաշվի նստել: Եվ մեզ կհարգի նաև մեր դաշնակից Ռուսաստանը: Բայց մեզ ո՞վ է ասել, թե այնքան շատ հավատանք ռուսին, որ հիմա այսքան խորը հիասթափվենք: Թուրքիան զենք է մատակարարում ԻՊ-ին՝ այդ ավազակախմբերին, որպեսզի նրանք պայքարեն Սիրիայի դեմ, Ռուսաստանը Թուրքիային մեղադրում է դրա համար, սակայն նույն ձևով Ռուսաստանն ինքն է զենք մատակարարում Ադրբեջանին, և Ադրբեջանը կռվում է մեր դեմ: Ի վերջո, պարզ է, իհարկե, որ Թուրքիայի և Ադրբեջանի սադրանքն ավելի շատ ուղղված է Ռուսաստանի դեմ: Ռուսաստանը մոռացե՞լ է, որ թուրքերը կես միլիոնից ավելի ռուսների մեկ հարվածով կոտորել են հենց միայն Շամխորում՝ անցյալ դարում: Որպես Ռուսաստանի դաշնակից՝ ներքին ցավ ենք ապրում, որ նա չի տեսնում, թե ինչպես է իր հետ Ադրբեջանը «խաղ խաղում»:

Ե՛վ քառօրյա ահաբեկչության, և՛ Եղեռնի, և՛ մեր բոլոր մյուս ողբերգությունների գլխավոր դասն այն է, որ մենք պետք է հավատանք ինքներս մեզ և պետք է զինվենք ավելի, ավելի ու ավելի:

Երբեմն սնապարծության հասնող մեր ինքնահավանությունը մեզ ավելի է վնասում, քան թուրքը: Ոգին՝ ոգի, ուժը՝ ուժ, սերը երկրի հանդեպ, մեր հողի հանդեպ՝ սեր, բայց մեր ժամանակներում պատերազմի Աստվածը զենքն է: Զենք, որ մենք ունենք: Եթե մենք զգոն ու պատրաստ լինեինք, այնքան ջահելներ չէին զոհվի: Աշխարհագրական այսպիսի պայմաններում, թուրքերով շրջապատված, այսպիսի լարվածության մեջ գերժամանակակից զենք չկիրառել՝ նշանակում է դատապարտված լինել ոչնչացման: Սա արդեն օրվա հրամայականն է: Այլապես անդառնալի կորուստներ կունենանք:

Այլ ելք չունենք:«Մուրճ ու զնդան պիտի լինես, ճշմարտություն չկա ուրիշ»: Սա Իսահակյանի խոսքն է: Մեր այսօրը մեր արյունոտ պատմության բոլոր օրերի կրկնությունն է, ցավոք. նույն յաթաղանը միշտ բարձրացված է մեր գլխին: Իսկ մեր փրկությունը մեր միջուկային զենքն է: Դեռ մեր պապերն են ասել՝ թուրքի հետ ընկերություն արա, բայց մահակը ձեռքիցդ մի գցիր: Մահակը որ ձեռքիդ լինի, թուրքը լավ «ընկերություն» կանի, ոտնամատներդ էլ կլիզի:

Մենք պիտի լինենք ամբողջական, միասնական: Էլիոթը մի լավ խոսք ունի, ասում է՝ բարոյականության մասին շատ ենք խոսում, ինչո՞ւ, որովհետև ամենաշատ բացակայողը բարոյականությունն է: Հիմա միասնականության մասին շատ ենք խոսում, բայց շատ խոսելը դեռևս միասնականություն ապահովել չէ: Ինչո՛ւ պիտի միայն ծանր պահին միավորվենք: Միասնականությունն այն է, որ և՛ սահմանի վրա կանգնած զինվորը, և՛ այստեղ՝ Ստեփանակերտում, և՛ մեկ ուրիշ երկրում ապրող հայը, բոլորս նայենք մի ուղղությամբ: Ես կարծում եմ՝ ժամանակն է, որպեսզի և՛ Ամերիկայում, և՛ Ֆրանսիայում, և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում, և՛ Ղարաբաղում, ամենուրեք, ուր կա թեկուզ տասը հայ, նրանց համար պետք է անպայման դասընթացներ կազմակերպվեն ռազմական գործի, զենքի օգտագործման:

Մենք բոլորս պիտի լինենք նախ և առաջ զինվոր՝ զինվոր-բանաստեղծ, զինվոր-շինարար, զինվոր-բժիշկ, զինվոր-գիտնական, այո՛, առաջին հերթին՝ զինվոր, այլապես մենք գոյություն չենք ունենա: Միակ ելքը սա է: Մենք օր օրի նվազում ենք ցորնահասկի պես, քոչվորները մոլախոտերի նման բազմանում ու մեզ օղակում են բոլոր կողմերից: Շատ էական ու բացառիկ կարևոր է ծնելիության մակարդակի շեշտակի բարձրացումը՝ պլանավորված ձևով:

Ապրիլյան ահաբեկչությունը պիտի հստակ ուղղումներ մտցնի մեր պահվածքի, անհետաձգելի անելիքների մեջ: Ես, բնականաբար, չեմ կարող ռազմական գործի վերաբերյալ դատողություններ անել, բայց գտնում եմ, որ այդ ասպարեզում Արցախն ունի պատերազմի բովով անցած երևելի մասնագետներ, բանակը ղեկավարող ու ընդհանուր գործընթացներին ուղղություն տվող տաղանդավոր ու փորձառու գեներալներ՝ հրամանատարից մինչև գերագույն հրամանատար: Նրանք, պարզ է, արդեն արել են համապատասխան վերլուծություններ ու անհրաժեշտ հետևություններ:

Մենք՝ ՀՀ և Արցախի գրողների միությունները, Հայաստանի և Արցախի նկարիչների միությունները, Արցախի ժուռնալիստների միությունը և «Կաճառ» գիտական կենտրոնը, հանդես ենք եկել հիմնադրամ ստեղծելու առաջարկությամբ: «Ազգային տուրք՝ հայոց զինուժին», ինչպես ժամանակին հրեաներն են արել: Աղբյուր Սերոբն է ասել, որ ավելի լավ է սոված մնանք, քան թե զենք չունենանք: Մենք ունենք զենք, բայց գերժամանակակից զենքը միշտ էլ պիտի լինի ավելի, քան կա... Մեր օրինակը մեզ նման Եղեռն տեսած, մեզ նման բնական ռեսուրսներից «երես չառած», այսօր արդեն հզորացած Իսրայելը պիտի լինի, որին ոչնչով չի զիջում հայերիս արարման հանճարը:

Անվիճելի փաստ է, որ մեր ժողովրդի նվաճումները անկախության շրջանում մեծ են ու անուրանալի: Դա բոլորն են տեսնում: Մանավանդ վերջին տարիներին կատարվածն անախադեպ է: Սակայն անցյալ դարի 90-ական թվականներին Հայաստանում և Արցախում ռազմավարական նշանակության շատ օբյեկտներ, ինչպես և հողի հարուստ ռեսուրսները ոչ միայն պետությանը չմնացին կամ ժողովրդին, այլ բաժին դառան մի շարք անհատների ու իշխանավորների: Արդյունքում ստացվեց այնպես, որ ունենք ոչ հարուստ հասարակություն, ոչ անհրաժեշտ չափով հարուստ պետություն:

Հարուստ է լինում այն պետությունը, որ ունեցնում է հարուստ և ունևոր հասարակություն: Բայց եթե ունևորների մեջ ամենահարուստը պետությունը չէ...

Արևմտյան Հայաստանում են ժամանակին եղել ամենահարուստ հայերը: Նրանցից մեկի տուն-ապարանքը հիմա էրդողանի համար նախագահական նստավայր է: Բայց ժամանակին այդ հայերը, ինչպես կարգն է, փամփուշտով չեն ապահովել Անդրանիկին, Նժդեհին, մյուսներին: Առաքելոց վանքում Անդրանիկն իր զինվորներով ամրացավ, պայքարեց, և երբ փամփուշտները վերջացան, ստիպված հեռացավ: Այսինքն՝ մեր հարստությունը, ինչպես ժամանակին Ռաֆայել Պատկանյանն է նշել իր բանաստեղծության մեջ, կորած է, եթե դա չի ծառայում մեր ժողովրդին:

Մենք պետք է ունենանք նաև ազգային ծրագիր: Յուրաքանչյուր գործողություն պիտի համաձայնեցված լինի հայերիս մեջ, այդ գործողություններում անհրաժեշտ է, որ լինի ներքին համերաշխություն, ներդաշնակություն: Եվ այս դեպքում մենք բավականին կշահենք:

- Այն կարծիքի՞ն եք, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը սպառել է իր հնարավորությունները լիարժեք միջնորդական առաքելություն իրականացնելու համար:

- Ես խորապես հիասթափված եմ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունից, որովհետև նա ստանձնել է մի դերակատարություն, որը չի կատարում: Վերջերս, ճիշտ է, կարծես ինչոր տեղ փորձում է հասցեական դարձնել իր խոսքը, բայց ոչ այնքան շեշտված ձևով: Բանակցային գործընթացը տիկնիկային թատրոն է հիշեցնում՝ բեմից դուրս: Կարծես միայն գալիս-գնում են:

Դեռևս խորհրդային տարիներին համաժողովրդական քվեարկությամբ մենք դուրս եկանք Ադրբեջանից: Սովետն էր, որ Արցախը կցեց հայերի, թալիշների, լեզգիների, ուդիների հողերի վրա հորինված Ադրբեջան պետությանը: Դաշտային Ղարաբաղն ամբողջապես հելուզվեց ազերական օղակների մեջ, մեր պատմական տարածքները կուլ գնացին քոչվոր ցեղերին: Լենինյան կուսակցության գլխավորությամբ կատարվեց սպիտակ եղեռն: Իսկ հիմա, երբ սովետը չկա, էլ ի՞նչն է մեզ «կապում»: Ժողովրդավարական բոլոր քայլերը մենք պահպանել ենք: Եվ Ղարաբաղն այժմ կայացած պետություն է: Երբ նայում եմ աշխարհի պետությունների համաստեղությանը, տեսնում եմ, որ ԼՂՀ-ն շատ ավելի ժողովրդավար է:

- Կիսու՞մ եք այն կարծիքը, որ Արցախի և Հայաստանի, առհասարակ, անվտանգության միակ երաշխավորը բանակն է:

- Ես միշտ մտածել եմ, որ մենք ոչ միայն ուժեղ ենք, այլ ավելի քան ուժեղ ենք: Այսօր էլ ես այդ հավատը պահում եմ: Հայաստանի, Արցախի ոչ միայն անվտանգության, այլև գոյության միակ, կրկնում եմ՝ միակ, երաշխավորը հայոց բանակն է, որով հպարտանում ենք: Ռազմական սխրագործությունը հայի գենի մեջ կա ի սկզբանե: Մեր բանակում ընդգրկված են բավականին բարձրակարգ մասնագետներ: Ե՛վ զինական կարողություններով, և՛ ներքին ներուժով, և՛ տաղանդով, իսկապես, հայերը առանձնացել են բոլոր ազգերի մեջ: Սա մեր առավելությունն է: Հայոց հանճարը հիմա մեր շարքային զինվորների ու գեներալների մեջ է: Մենք պիտի այդ առավելությունն օգտագործենք ի շահ մեր ժողովրդի: Պիտի մեր բանակն ավելի ու ավելի պաշտպանունակ դարձնենք: Ամենաբարձր աշխատավարձը մեր երկրում պետք է ապահովենք առաջին հերթին զինվորականների համար: Նրանց պիտի տալ բարձր արտոնություններ: Մարդիկ իրենց կյանքն են տալիս հայրենիքի

ԲԱՆԱՁԵՎ

ՀԱՅԻ «ԵՏԵ» ԽԵԼՔԸ *կամ* ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ...

համար, սա մեր ժողովրդի, հայի ամենամեծ հատկանիշն է, մեր փոքրիկ ազգի որակական ոսկե միջուկը: Մենք սա պիտի պահպանենք, սնենք նոր երակներով, շատ ավելի հզորացնենք:

Մեր հայրենիքը պիտի լինի աշխարհի ամենաարդար երկիրը:

Մենք, այո՛, փոքր երկիր ենք հիմա: Մեր երազած Հայաստանը ունենալու համար պետք է առաջին հերթին երաշխավորը լինենք մեր ժողովրդի անվտանգության: Եթե մենք չկարողացանք դա անել, ապա մեր մնացած զարգացումները՝ շենքեր կառուցել, մշակույթ ստեղծել և այլն, և այլն, անօգուտ բաներ են: Գերժամանակակից զենքն է բոլոր հարցերի լուծման բանալին:

Անկախ նրանից, թե քո դաշնակիցն ինչպիսին է, դու պիտի հույսդ քեզ վրա միայն դնես: Դարերի ընթացքում մենք այնտեղ, որտեղ մեր հույսը, ապավենը մենք չենք եղել, տանուլ ենք տվել, հիասթափվել ենք: Վերջում հասկացել (հայի ետի խելքով), որ որտեղ էլ նայում ենք, մեր բարեկամը միայն մեր ներսում է, ինքներս ենք մեր բարեկամը:

- Ո՞րն եք տեսնում մտավորականության դերը իրադարձությունների ներկա և հետագա զարգացումներում:

- Ես կարծում եմ, որ երկրի սերուցքը մշտապես դիտվել է մտավորականությունը: Թուրքիան, երբ 1915թ. սկսեց իրագործել հայերիս Ցեղասպանությունը, իր գործը ավարտին հասցնելու համար միանգամից մտավորականներին ոչնչացրեց: Ժողովրդի գլուխը մտավորականն է, եթե գլխատվում է ազգը, նրանից հետո ժողովրդի հետ ինչ ուզում են՝ անում են: Արցախի, Հայաստանի, Սփյուռքի հայ մտավորականությունը ազգային հարցում, կարելի է ասել, մշտապես իր բարձրության վրա է եղել: Վերջերս մեծ հպարտություն ապրեցի, երբ Կարո Փայլանը թուրքական խորհրդարանում Վարուժանի, Զոհրապի և եղեռնազոհ մեր մյուս երևելիների հարցը բարձրացրեց, նկարները ցուցադրեց և միաժամանակ առաջարկեց, որ հանձնաժողով ստեղծեն ու քննեն, թե ինչ պայմաններում նրանք սպանվեցին: Դա, իհարկե, խիզախություն է:

Մենք միշտ խոսում ենք մեր ոգու մասին: Մեր մեծագույն հարստությունը մեր աննկուն ոգին է: Ոգին, խիզախման փիլիսոփայությունը մեր մեջ մաքրագործվելով, սերնդեսերունդ գնում են՝ գրականության, դպրության, մշակույթի, գիտության միջոցով, փոխանցվում են դարերին:

Մտավորականը ուղեղն է երկրի: Անուղեղ երկիրը միշտ դատապարտված է լինում կործանման: Մենք սովորաբար խոսում ենք հայկական հատկանիշների մասին, բայց ես շատ տխրում եմ, երբ տեսնում եմ, որ մեր ազգային արժեհամակարգը ամբողջացնող այն գծերը, որոնցով առանձնանում է հայ մարդը, այս պարագայում՝ արցախցին, կորցնում ենք. երկիրն ասես տրվել է փողի, հարստության կուրացնող մոլուցքին: Եվ այդ մրցավազքում կորցնում ենք ամենագլխավորը՝ ինչով շահեկանորեն առանձնանում ենք:

Մտավորականությունը երկրի ռազմավարության շարժիչ ուժն է:

ԱՄՆ-ի կյանքում եղավ մի պահ, երբ այդ երկրի տնտեսությունը զրոյական էր: Եվ պետության կից ստեղծվեց ուղեղի կենտրոն (мозговой центр): Յուրաքանչյուր ոլորտ համախմբեց իր կենտրոնական դեմքերին, խելացի, տաղանդավոր մարդկանց, խորհուրդներ կազմավորվեցին, և առանց այդ խորհուրդների որոշման, ոչ մի հարց չէր լուծվում երկրում: Երկիրը միանգամից դարձավ իրավական պետություն՝ և՛ հզոր, և՛ ուժեղ: Իսկ մենք ո՞ւմ ենք սպասում: Արկադի Տեր-Թադևոսյանը հայտարարեց մեր բոլոր գեներալներին հավաքվելու մասին: Անհրաժեշտությունից ծնվեց այդ գաղափարը: Սևակն ասում է՝ ելքը գտնվում է այնտեղ, ուր վերջանում է հնարը: Իսկ ինչո՞ւ չհավաքել նաև մեր բոլոր գիտնականներին, բոլոր ավիակոնստրուկտորներին, ռազմագործներին, մշակութաբաններին, մյուսներին... Համապատասխան խորհուրդները պիտի գործեն պետական կառույցներին կից, որ հայ գիտնականը, անկախ նրանից, թե որտեղ է ապրում, ոչ թե իրեն պարապուրդի մատնի, այլ իմանա, թե հայ ժողովրդի ռազմավարության մեջ կարևոր ուղիները որոնք են, որն է զարգացման ճշմարիտ ճանապարհը, որը պետք է մեր ժողովրդին փրկի: Պետք է վերջ տալ այն մոտեցումներին, որոնք քանդում, ավերում են հայ մարդու ներքին աշխարհը: Աստված մարդու մեջ է: Ամենամեծ և ամենասուրբ եկեղեցին մարդն է: Եկեղեցում մոմ չվառելը մեծագույն մեղք է: Բայց մենք որքա՜ն եկեղեցիներ ունենք (շատ հաճախ՝ ավերված), որոնցում տարիներ շարունակ մոմավառություն չի լինում: Քանակի մեջ չէ հավատը, այլ... կառուցվածին տեր կանգնելու, պահպանելու մեջ: Քանի՛ եկեղեցի ունենք աշխարհում, որ արդեն մզկիթի են վերածվել... Մտածե՞լ ենք այդ մասին, թե ինչու է այդպես լինում...

Վերացնենք պատճառը:

Հպարտանում ենք, որ երկրագնդի ամենատարբեր ծագերում հայն աչքի է ընկնում իր ինքնատիպ կառույցներով, որոնք, ի վերջո, մնում են ուրիշին, մենք մեր շինարարական հանճարը պիտի ներդնենք հայի՝ որպես տիեզերական սուբյեկտի, կառույցի մեջ, փոխենք մեզ դարեր շարունակ ուղեկցող, ուրիշների կողմից «փառաբանվող» գծերը:

Մեր աշխարհագրական դիրքը երբեք չի փոխվելու. սա պիտի լավ հասկանանք, վերջապես ինչքա՞ն պիտի մենք կառուցենք, թուրքը քանդի: Մեր երկիրը պիտի դառնա աշխարհում ամենաժամանակակից զենք արտադրող կենտրոններից մեկը: Տերը լինենք մեր ոճի, մեր զարգացման, մեր բազմացման, մեր լինելության, մեր կորած հողերի վերադարձման: Կենտրոնանանք մեծապես ռազմագործության վրա: Մեր դանդաղկոտությունը, մեր հապաղումն այս գործում նշանակում է թուրքին օգնել, որ մեզ ոչնչացնի:

- Իննսունականների Արցախյան պատերազմը պատշաճ գեղարվեստական արտացոլում գտե՞լ է հայ գրականության մեջ, թե՞ գրողական երևակայության զգրոցներում դեռ անմշակ նյութ շատ կա, մանավանդ եթե նկատի ունենանք, որ ապրիլյան պատերազմի իրողությունները ևս գեղարվեստագրման կարիք ունեն:

- Ես, իհարկե, կխուսափեմ անուններ տալուց: Իսկապես ստեղծվել են գործեր, որոնք ուշադրության արժանի են: Բայց եթե ասեմ, որ Ազատամարտը լիարժեք արտացոլում է գտել մեր գրականության մեջ, ճիշտ չի լինի: Գեղարվեստական գրականությունն ակնարկ չէ, նստես ու թարմ տպավորությունների տակ գրես, պետք է տարիների նստվածք լինի: Հայ գրողը, ցավոք, զրկված է գեղարվեստական խնդիրներին ամբողջական նվիրվելուց: Մենք առավոտից մինչև ուշ գիշեր մշտապես խրված ենք այլ գործերի մեջ՝ ոչ մեր մեղքով: Մեր կռած, մեր կոփած, մեր արյան մեջ թրծված հաղթանակին համարժեք բառը պիտի գտնվի: Մենք դեռ չենք ստեղծել այդ բառը և որոնման ճանապարհին ենք: Իսկ գրականությունը սկզբից մինչև վերջ (այդ վերջը հարաբերական է, չկա), որոնում է: Ես ուղղակի ողջունում եմ, որ մեր գրողները ճշմարիտ ու հետաքրքիր որոնման մեջ են:

Հարցազրույցը՝
Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ԻՆՔՆԱԶՐՈՒՅԺ-ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3 ☜

Երազանքի ուղիներով

1968թ. հաջողությամբ ավարտեցի դպրոցը և փորձեցի իրականացնել վաղեմի երազանքս: Դիմեցի Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժին: Քննությունները հաջող հանձնեցի, սակայն մրցույթով դուրս մնացի ընդամենը մեկ միավորի պատճառով: Ծանր ապրումներ ունեցանք ես ու ընտանիքիս անդամները, առավելապես՝ մայրս, որն ինձ հետ մեծ հույսեր էր կապում:

Հաջորդ տարվա փորձս նույնպես չհաջողվեց: Չկոտրվեցի ու համառորեն պայքարում էի: Հիշեցի դպրոցական տարիներս, որի ընթացքում ականատես դարձա սոցիալական շերտավորման խիստ ընդգծված երևույթին: Ասկերանում կային մի քանի ընտանիքներ, որոնք ակնհայտ ունևոր էին, իսկ մյուսները՝ չքավոր: Այդ ընտանիքների երեխաներն էին կարողանում ծանոթ-բարեկամների միջոցով բուհեր ընդունվել ու միշտ «վերևից» էին նայում մեզ... Վիրավորված ինքնասիրությունս ինձ հանգիստ չէր տալիս: Պայքարելուց զատ այլ տարբերակ չունեի: Ինչ էլ լինի, ես պիտի ապացուցեմ, որ առանց որևէ ծանոթի միջամտության կարող եմ ընդունվել, ու գնացի երազանքիս հետևից: Միայնակ մեկնեցի Երևան, ընկերուհի գտա, միասին տուն վարձեցինք, միասին աշխատեցինք Երևանի լամպերի գործարանում, ու սկսեցի տքնաջան նախապատրաստվել քննություններին: Ընտանիքիս չանհանգստացրի, ամռանը փաստաթղթերս հանձնեցի, առանց որևէ մեկի աջակցության մասնակցեցի քննություններին ու սպասեցի արդյունքների ամփոփմանը: Երբ օգոստոսին ընդունվածների ցուցակը կախեցին, հեռագրեցի ընտանիքիս, որ ընդունվել եմ: Հարազատներիս ուրախությանը չափ չկար. ես հասել էի նպատակիս:

Միշտ ձգտել եմ լավ սովորել և ամեն ինչով աչքի ընկնել: Իսկ երբ արձակուրդներին տուն էի գնում, այդ ունևոր ընկեր-ընկերուհիներին ուշադրություն չէի դարձնում (վերադարձնում էի ինքնասիրությանս «կորուստը»... Խնդրում եմ՝ ինձ ոխակալ չհամարեք):

Ի՞նչ դեր խաղաց բուհը իմ կյանքում

1970 թվականի սեպտեմբերին հպարտհպարտ ոտք դրեցի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի շեմքից ներս. ես արդեն ուսանող էի, որը երկու տարվա ընթացքում հասցրել էր անգիր անել հայոց լեզվի ու գրականության, պատմության բոլոր դասագրքերը, ինչն էլ հեշտացնում էր ուսումս:

Ես շատ երջանիկ էի, որ այդ կրթօջախում ուսանել եմ բանասիրական գիտությունների հսկաներին՝ Աշոտ Աբրահամյանին, Արարատ Ղարիբյանին, Առաքել Առաքելյանին, Պարույր Սահակյանին, Արտաշես Կարինյանին, Հ. Մազմանյանին, Աննա Արտաշեսովնային..., իմ ունեցած գիտելիքների համար հենց նրանց եմ պարտական:

Արդեն 3-րդ կուրսում էի, որ նշանվեցի համադասարանցի Վալերիկ Մելքումյանի հետ, ու քանի որ հեշտ չէր ամեն անգամ գյուղից Երևան հասնելը, համոզեցին ու տեղափոխեցին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ: Դա ամենամեծ սխալն էր, որ գործեցի ես կյանքում, քանզի շատ մեծ հնարավորություններ ունեի գիտության մեջ խորանալու համար: Բայց, ի՞նչ արած, երբեմն կյանքը իրենն է թելադրում, ու մենք ենթարկվում ենք դրան:

Ստեփանակերտի մանկավարժականում սովորելն ինձ համար շատ հեշտ էր. երբեմն ասում էի՝ գնում եմ մանկապարտեզ: Չնսեմացնելով այդ բուհի դասախոսների աշխատանքը՝ խոստովանեմ, որ Երևանի մանկավարժականն ուրիշ էր մանավանդ այն տարիներին:

Դժվար շրջան

1973-ին մենք ամուսնացանք: Հաջորդ տարում ծնվեց մեր առաջնեկը՝ դուստրս, որի մասին կուրսընկերներս կատակով միշտ ասում էին, թե լեզվաբան է ծնվելու: Ճիշտ է, հետագայում նա լեզվաբան չդարձավ, այլ բժշկուհի, բայց նրա ծնունդը մեզ անչափ երջանկություն պարգևեց, ու նրան զուգահեռ ավարտեցի ինստիտուտը:

Թվում էր, թե ամեն ինչ լավ է, սակայն այդպես չեղավ. կյանքը ծանր հարվածներ էր նախապատրաստել ինձ համար: Դստերս կնունքից օրեր անց՝ 1974թ. հուլիսի 1-ին, ստացանք խորհրդային բանակում ծառայող 20-ամյա եղբորս մահվան բոթը (չորս ամիս էր մնացել մինչև ծառայության ավարտը), որը մինչ օրս հանելուկային է մնացել:

Տարիներն անցնում էին, հազիվ կարողանում էինք մեզ գտնել, ահա 1984-ին էլ ստացվում է 28-ամյա մյուս եղբորս մահվան բոթը... Կյանքը ինձ համար այդ պահից կորցնում է իր բոլոր գույները՝ թողնելով միայն սևը...

Մշուշվեցին իմ բոլոր երազանքները, զրկեցի ինձ բոլոր տեսակի վայելքներից: Դա շատ ծանր մի ժամանակաշրջան էր ինձ համար: Տարիներ անց միայն հասկացա, որ կարելի էր այդ ամենը քաջությամբ տանել. ջահել էի, չէի հասկանում:

Մանկավարժական մկրտություն

1975 թվականից աշխատանքի անցա Խնապատի միջնակարգ դպրոցում և մինչև թոշակի անցնելս աշխատեցի այնտեղ:

Ես հասկանում էի, որ մանկավարժի համար առաջին տարիները շատ կարևոր են՝ լավ մասնագետ դառնալու համար, և ուժ ու եռանդ չէի խնայում: Միշտ պատասխանատվությամբ էի պատրաստվում դասերին, որ դասի ավարտին տեսնեի սաներիս աչքերի փայլն ու հաջորդ ժամին անհամբեր սպասելու ցանկությունը: Դպրոցի տնօրեն, երջանկահիշատակ Գալյա Բաբայանի (նա Լենինի շքանշանակիր էր անցյալ դարի 70-80-ական թվականներից) մոտ այլ կերպ հնարավոր չէր աշխատել, որովհետև աշխատանք գնահատող անձնավորություն էր: Ափսոս, շուտ հեռացավ կյանքից: Նրան փոխարինեց Զավեն Բեգլարյանը, որն արժանապատվորեն շարունակեց նրա գործը՝ լավագույնս պահպանելով դպրոցի բարի ավանդույթները:

Ընտանիքը և նրա պահպանումը

Չորս զավակ ունեցանք մենք համատեղ կյանքում՝ երկու որդի, երկու դուստր: Չորսն էլ բարձրագույն կրթություն ստացան ու գնացին իրենց երազանքների հետևից: Ընտանիք կազմեցին, երեխաներ ունեցան:

Շատ դժվարությունների եմ հանդիպել, լռելյայն տարել ու փրկել ընտանիքս՝ հանուն երեխաների: Երբեք թույլ չեմ տվել, որ իմ երեխաներն ականատես լինեն ինչ-որ վիճաբանության կամ տարաձայնության: Դեռևս պատանության տարիներին էի երդվել, որ կյանքում երբեք թույլ չեմ տալու, որ ընտանեկան վեճերն ու կռիվները վրդովեն երեխաների մանուկ հոգիները: Թե ինչ գնով է դա հաջողվել ինձ, թողնում եմ փակագծերում, որ երբեք չեմ բացում: Իսկական մանկավարժը պիտի ընդունակ լինի նման զոհողությունների:

Երբ հասարակական հիմունքներով աշխատում էի Ասկերանի կրթության բաժնին կից «Անչափահասների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ում (հանձնաժողովի անդամ էի), շատ ընտանիքների խնդիրներ ենք լուծել ընկերներով և անչափահասների ճակատագրեր որոշել: Ըստ ինձ՝ ընտանիքի պահպանման հիմնական առաքելությունը կնոջ ուսերին է ծանրացած, ու նա պատվով պիտի կատարի այն:

☞ 7

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ

ԲԱԺԱՆԱՅՏՈՒՄՆԵՐ ՀԵՔԻԱԹԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆՈՒՄ

Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ, հարուստ ու շքեղ աշխարհ:

Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթներ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում:

Հովհ. Թումանյան

Իրոք, հեքիաթներն ամենաշքեղ ու խորքային փիլիսոփայություն պարունակող ստեղծագործություններ են, այնքան բազմաշերտ, որ մարդկային մեկ կյանքը չի բավականացնի՝ պեղելու նրանց իմաստային բազմազանությունները: Հեքիաթներն են, որ փայլ են հաղորդում մռայլ ու գորշ իրականությանը, ապրելու ուժ ու կորով հաղորդում հուսահատության մեջ հայտնված հոգիներին: Հեքիաթը եղել, կա ու կլինի այն միակ հրաշագործ միջոցը, որով սերունդներ են կրթվել ու բարի դարձրել կյանքը:

Հեքիաթն ավելի իրապատում է դառնում մանավանդ այն դեպքում, երբ հայտնվում ես հեքիաթային մարդկանց շրջապատում:

Հովհաննես Թումանյանի թանգարանը հերթական հետաքրքիր գործն էր նախաձեռնել՝ հյուրընկալելով հեքիաթագիտական 15-րդ միջազգային գիտաժողովը, որը տեղի ունեցավ Մատենադարանի փոքր դահլիճում:

Հիմնական նախաձեռնությունը պատկանում է թանգարանի հեքիաթագիտության բաժնի ղեկավար, բ.գ.դ., ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, թարգմանչուհի Ալվարդ Ջիվանյանին: Գիտաժողովը իր երկօրյա գործունեության ընթացքում հետաքրքիր բացահայտումներ արեց աշխարհի հեքիաթների հանդերձարանում՝ հաճելի ու տպավորիչ պահեր պարգևելով նրա մասնակիցներին: Շատ դժվար էր հեքիաթային այդ աշխարհից բաժանումը, քանզի ներկայիս գորշ իրականության համատարած մշուշի մեջ լուսաշող ու ջերմացնող ակնթարթներ էինք ապրում:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը նշեց, որ թանգարանի գիտական առաջնահերթություններից շարունակում է մնալ հեքիաթների ուսումնասիրությունը, որն ամեն տարի նոր խորագիր է ունենում Ալվարդ Ջիվանյանի ջանքերի շնորհիվ, ու յուրաքանչյուր հաջորդ տարվա խորագիրը միշտ գերազանցում է նախորդին: Հեքիաթի իմաստաբանական խորհուրդը շատ մեծ է, և երկօրյա լսումները շատ մեծ արձագանք են ունենալու:

Տիկին Ջիվանյանի կարծիքով՝ ամեն տարի թվում է, թե անհնար է դառնալու հաջորդ գիտաժողովի կազմակերպումը, մանավանդ որ ինքը երկար ժամանակ բացակայում էր, և այդ ընթացքում ողջ հոգսը թանգարանի տնօրենի ուսերին էր, սակայն նրա խիզախումը թիմային աշխատանքի շնորհիվ բարեհաջող ընթացք ունեցավ: Նա նշեց, որ զեկուցումների շարքում կան նաև օտարազգի մասնակիցների ուսումնասիրություններ:

Թամար Հայրապետյանը (ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ) ներկայացրեց «Առատության եղջյուրը՝ որբերի ստնտու և շքեղ հանդերձների հովանավոր» նյութը: Ըստ հունական դիցաբանության՝ Զևսի ստնտու Ամալթեա այծի եղջյուրն ունեցել է մոգական հատկություն և ապահովել է տիրոջ փափագը: «Առատության եղջյուրը» այլաբանորեն նշանակում է որևէ երևույթի, սննդի, հագուստի, եկամուտների առատություն, շռայլություն: Հայ բանահյուսության մեջ կենցաղավարել է «Կարմիր կովի խեքյաթը» անվամբ հայտնի մի հեքիաթախումբ, որը համապատասխանում է Հանս-Յորգ Ութերի միջազգային դասակարգմամբ «Մոխրոտիկ» խորագիրը կրող հեքիաթների տիպին: Մեր հեքիաթների վերլուծությունից պարզ է դառնում, որ հանիրավի պատուհասված որբերին առատ սնունդ և պերճ հանդերձներ ու ոսկե մաշիկներ են պարգևել կովի կամ եզան ոսկորները, գլուխը և եղջյուրները, որոնք ծիսառասպելական ակունքներ ունեն: Օրինակ՝ կովը կամ եզը խորթ մոր պահանջով մորթվում են, որպեսզի ամուսնու աղջիկը կամ երեխաները զրկվեն հովանավոր կենդանիների աջակցությունից: Որբերը պառավի խորհրդով կովի կոտոշները, ոտները, սմբակները և բոլոր ոսկորները հորում են գոմում, սնվում կոտոշների յուղ ու մեղրով, և նրանց մազերն ու դեմքը ոսկեզօծվում են…

Այդ խմբի հեքիաթներում շքեղ հանդերձանք (սոցիալական կարգավիճակի փոփոխություն) ձեռք բերելու նախապայմանը կապված է մորթված կենդանու ոսկորները ժողովելու, միացնելու, ամբողջացնելու ծիսական արարողության հետ, ինչն էլ վերականգնում է մարդու և տիեզերքի, միկրո և մակրո կոսմոսների խաթարված ներդաշնակությունը:

Նվարդ Վարդանյանը (ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ) իր զեկուցման մեջ անդրադարձավ կոշիկների իմաստաբանությանը հայկական հրաշապատում սյուժեներում, և քանի որ սերտորեն փոխկապակցված է ոտքի իմաստաբանությանը, ոտք-գուլպա-կոշիկ իմաստաբանական շղթայում բացահայտեց «մի ոտքը այն աշխարհում» արտահայտության իմաստը, թաղման ծեսի ժամանակ հանգուցյալի համար նոր կոշիկի առկայությունը, հարսնացուի կոշիկը գողանալու ծեսը, Նոր տարվա շեմին կոշիկի նետելը հակառակ ուղղությամբ, Ամանորին գուլպա կախելը երդիկից և այլն: Ոտք-կոշիկ-գուլպա այլաբանության ուշագրավ շերտեր են բացահայտում տարեպտույտի և հարսանեկան ծեսերից ծագած մի շարք խաղեր:

Վարդուհի Բալոյանի (ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ) նյութը կապված էր «Փեշակը ոսկի ա» արտահայտության հետ, որի վերլուծությունը նա կատարեց Ղ.Աղայանի «Անահիտ» հեքիաթի հիման վրա, որը գրվել է Լոռիում տարածված «Փեշակը ոսկի ա» ժողովրդական հեքիաթի մոտիվներով: Հեքիաթը ուշագրավ է նաև նրանով, որ դեպքերը ծավալվում են Արցախում: Հեքիաթի առանցքում մարդու աշխատանքով ձևավորվող ինքնությունն է. այստեղ արհեստը դառնում է ոչ միայն տնտեսական անհրաժեշտություն, այլև բարոյական արժանապատվության չափանիշ: Հեքիաթում հագուստի փոփոխությունը գործում է որպես կերպարների ներքին զարգացման նշան՝ բացահայտելով արժեքների իրական հաջորդականությունը. իշխանությունը չափվում է ոչ թե վախով և սին փառքով, այլ աշխատանքի, քաջության, բարոյականության և խոնարհության ունակությամբ:

Հայրապետ Հակոբյանը (Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ) կարևորեց այն փաստը, որ հեքիաթների հերոսների հագուստից կարելի է պատկերացում կազմել ազգային նկարագրի, սոցիալական կարգավիճակի, բարեկեցության կամ չքավորության, սոցիալական պատկանելության մասին: Հայկական հեքիաթներում հաճախ են հիշատակվում կանացի զարդերից ուլունքներն ու մատանին: Ուլունքների հաճախակի հիշատակումը բացատրվում է դրանց կախարդական իմաստաբանությամբ. թագուհին կուլ է տալիս ուլունքը և հղիանում է, ձկան փորոտիքից դուրս եկած ուլունքը իրականացնում է ցանկացած երազանք, ուլունքի մեջ է աղջկա ուժն ու կյանքը: Իսկ ընդհանրապես հեքիաթի մեջ հագուստը յուրօրինակ կոդ է, որը պատկերացում է տալիս տվյալ ժամանակաշրջանի «նորաձևության», հագուկապի և նախասիրությունների մասին:

Օֆելյա Ազիզյանի (Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա)՝ հեքիաթից նորաձևություն թեզը հիմնականում վերաբերում էր բրիտանացի դիզայներ Ջոն Գալյանոյի կողմից 2009 թվականին ստեղծված «Սառցե գեղեցկուհիներ» հավաքածուին, որը ոգեշնչված է սլավոնական և բալկանյան ազգային հեքիաթներից: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հեքիաթային մոտիվները ժամանակակից նորաձևության մեջ չեն սահմանափակվում միայն դեկորատիվ հղումներով, ավելին, դրանք ձևավորում են բարդ տեսողական մետաֆորայի լեզու, որը դիզայներներին հնարավորություն է տալիս դիմելու կոլեկտիվ երևակայությանը, վերաիմաստավորելու մշակութային ավանդույթները և ստեղծելու նոր երևակայական աշխարհներ:

Էսթեր Խեչումյանի (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ) անդրադարձը վերաբերում էր «Թագավորի զգեստափոխության ֆենոմենը հայ բանահյուսության շահաբասյան սյուժեներում» թեմային: Հագուստը բնորոշող և տարբերակիչ դեր ունի: Հագուստով կարելի է որոշել մարդ-անհատի դիրքը և դերը տվյալ հասարակության մեջ: Շատ հաճախ մարդուն հարգանք էին մատուցում՝ ըստ թանկարժեք հագուստի: Հիշենք Խ.Աբովյանի «Հացակեր փեշը»: Պատմավիպական բանահյուսական սյուժեներում հաճախ է հանդիպում ծպտվելու նպատակով թագավորի զգեստափոխության մոտիվը: Այդ սովորությունն ունեին հատկապես արևելյան միապետները: Օրինակ՝ անքնությամբ տառապող Հարուն ալ Ռաշիդը վաճառականի հագուստով և հավատարիմ ուղեկիցներով թափառում էր Բաղդադի փողոցներում և արկածներ որոնում: Ի տարբերություն Հարուն ալ Ռաշիդի՝ Շահ Աբասի և Սուլթան Մուրադի զգեստափոխված շրջագայությունը նպատակ ուներ վեր հանել երկրի անցուդարձը, օրինազանցությունները, ճշմարտությունը ժողովրդի կենսակերպի մասին և այլն: Նա խելամտորեն օգտագործում է ստորին խավի հագուստները՝ ի նպաստ պետական կարևոր եզրահանգումների:

Արմինե Դանիելյանի (ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան) ուսումնասիրությունն առնչվում էր պատկերային տեքստերում հագուստի գործառույթներին: Հագուստը նախևառաջ կերպարաստեղծ հնար է, որը դառնում է սյուժեի զարգացման կարևոր բաղադրիչ: Պահպանելով նորաձևության ոլորտում ձեռք բերած իր հատկությունները՝ զգեստը ստեղծում է հեքիաթային մի հերոսուհու, որի սոսկ արտաքին տեսքն արդեն իսկ բավարար է լուսանկարի կամ ցուցադրության հանդիսատեսին լիարժեք հաղորդագրություն փոխանցելու համար:

Լուսինե Մադաթյանի (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ռուս-հայկական համալսարան) հետազոտությունը նպատակ ուներ ուսումնասիրել հագուստի նշանագիտական դերը Անջելա Քարթերի «Մարդագայլը», «Գայլերի ընկերակցությունը» և «Գայլ Ալիսը» ստեղծագործություններում: Հագուստն այս պատումներում դիտարկվում է ոչ թե որպես զարդ, այլ որպես առանցքային պատումային հնար, որը ձևավորում է Քարթերի վերապատումների ֆեմինիստական տեսակետը, ինչպես նաև հասարակության մեջ ամրակայված կարծրատիպերին ուղղված նրա ընդվզումները: Առաջին պատումում հագուստը գործում է որպես հրեշավորությունը քողարկող միջոց, երկրորդում հերոսուհու ինքնական մերկանալը «Կարմիր գլխարկը» հեքիաթում տեղ գտած բարոյական նորմերի խաթարումն է. կարմիր շալը դառնում է սեռական հասունության նշան, այլ ոչ թե թուլության և խոցելիության: Երրորդ՝ «Գայլ Ալիսը» պատումում Քարթերը զարգացնում է միտքը՝ հակասելով այն գաղափարին, թե հագուստը քաղաքակրթության մեջ մտնելու խորհրդանիշ է: Պատումների վերլուծությունները ցույց են տալիս, որ հագուստը երբեք պատահական ընտրված չէ, այլ առանցքային տեղ ունի Քարթերի ստեղծագործություններում. այն թաքցնում ու բացահայտում է, ճնշում ու ազատում է, սահմանափակում ու արտոնում:

Հեքիաթի տեքստում հագուստի տարրերի վրա հիմնված անտոնոմազիային անդրադարձավ Լուսինե Թովմասյանը (Սլավոնական համալսարան), որը հեքիաթում կատարում է մի քանի կարևոր դեր. նպաստում է վառ կերպարների ստեղծմանը, նրանց էության բացահայտմանը, ուժեղացնում է պատմության պատկերավորությունը և հաճախ տալիս է հումորային ազդեցություն: Անտոնոմազիան թույլ է տալիս հերոսի անունը փոխարինել արտահայտիչ նկարագրությամբ, որը բացահայտում է նրա էությունը: Նրա միջոցով հեշտ է բնութագրել կերպարին՝ նշելով նրա գծերը, սոցիալական դերը, զբաղմունքը կամ վարքագիծը: Ն.Ա.Ակիմենկոն, ուսումնասիրելով հեքիաթային կերպարների անունների ստուգաբանությունը, առանձնացնում է այն անունները, որոնք լեզվում ունեն փոխաբերական անվանման հատկանիշներ:

Զարինե Սառաջյանը (ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան ինստիտուտ, ԵՊՀ) բացահայտեց «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների տեքստերի հանդերձանքի սիմվոլիկան ու գործառույթը: Այս ժողովածուն արաբական, պարսկական, հնդկական և

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱԺԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ՀԵՔԻԱԹԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆՈՒՄ

արևելյան այլ մշակութային տարածքներում ձևավորված պատմությունների ամբողջություն է, որն ունի բազմաշերտ կառուցվածք, խորհրդանշական բովանդակություն և գեղարվեստական տարբեր հնարանքներ: Հետազոտության առանցքում է հեքիաթների հանդերձանքը՝ իր տարբեր կիրառություններով, սիմվոլիկայով և գործառույթներով: Հագուստի բաղադրիչները՝ կտորների տեսակները, գույները, ձևերը, դետալները, դառնում են կերպարների, գործողությունների ընկալման և բնութագրման հիմնական կոդերը: Շքեղ հանդերձանքները մատնանշում են իշխանություն, հարստություն կամ սոցիալական

բարձր դիրք, մինչդեռ հնամաշ շորերն ու ցնցոտիները գործածվում են որպես աղքատության կամ սոցիալական ծանր վիճակը ներկայացնելու միջոց: Մոգական հագուստները հերոսներին օժտում են գերբնական կարողություններով, իսկ կերպարանափոխության հագուստները շեշտում են հեքիաթների սյուժետային անկանխատեսելիության բնորոշ հատկանիշները:

Դորպատի (Տարտու) համալսարանի դասախոս Ջոնաթան Ռոուփերը իր զեկուցման մեջ ընդգծեց անգլիական բանահյուսության մեջ հաճախակի հանդես եկող դերձակի կերպարը, որն ընդհանուր առմամբ բացասական գծերով է հայտնի: Դերձակի կերպարի բացասական գծերով պատկերումը շատ ընդհանրություններ ունի ջուլհակի ու ջրաղացպանի կերպարների հետ, որոնք հիմնականում պատկերվում են որպես խաբեբա, դերձակին էլ ներկայացրել են տղամարդուն ոչ հարիր զբաղմունքի կրողի ու վերագրել են կնաբարո բնություն:

Գառնիկ Գևորգյանը (ԵՊՀ) ներկայացրեց հայկական և պարսկական ժողովրդական հեքիաթներում հերոսի հանդերձավորման որոշ ընդհանրություններ: 1000-ամյակների ակտիվ փոխշփումներն իրենց կնիքն են դրել հայոց և պարսից մշակույթների վրա: Հավանաբար տոտեմական շրջանի մնացուկներ են բուսեղեն հագուստների մեջ ծպտված հերոսների օրինակները, որոնց կարելի է հանդիպել հայկական և պարսկական հեքիաթներում:

Հասմիկ Մատիկյանի (ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոն) զեկուցման նյութը արտացոլում էր հայ մանկական բանահյուսության մեջ գործածվող մանկախնամ և մանկախաղաց երգերին, որոնցում գովերգվում են մանկան օրոցքն ու պարագաները (դոշակ, բարձ, բոխչա, շապիկ և այլն): Ոսկեգույնը, արծաթագույն հագուստը կամ կարմիրը խաղիկների միջոցով ներկայացնում են մայրական սիրո և ապագայի երազանքը:

Բանասեր-հետազոտող Գոհար Մելիքյանը ԱՄՆ-ից առցանց միացավ գիտաժողովին և ներկայացրեց հագուստի խորհրդանշական ու կառուցվածքային գործառույթները «Հազարան բլբուլ» հեքիաթախմբի շրջանակներում:

Օրբելի եղբայրների տուն-թանգարանից Մարիամ Օհանյանն անդրադարձավ 1911-1912թթ. Մոկսում Հովսեփ Օրբելու կատարած ուսումնասիրություններին, որոնք արտացոլում են մոկսեցիների սովորույթները՝ տնտեսական կենցաղը, զբաղմունքը, հագուստը, որոնք, ցավոք, այսօր գոյություն չունեն:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից Լուսինե Հայրիյանը ներկայացրեց Եվրոպայում ընդունված զգեստափոխության երևույթը դիմակահանդեսային կամ կառնավալային մշակույթում: Հեքիաթներում նույնպես թույլատրելի են շրջադարձերն ու կերպափոխությունները զգեստափոխության միջոցով (Ղազարոս Աղայանի «Արեգնազան կամ Կախարդական աշխարհ»):

Երիտասարդ ազգագրագետ Վահե Քոթանյանի ուսումնասիրության թեման՝ «Հեքիաթը որպես հայկական տարազի աղբյուրագիտական կարևոր հենք», բացահայտում էր, որ շատ հեքիաթներ հարյուրավոր ու հազարավոր տարիների ստույգ տեղեկություններ են իրենց մեջ պարունակում, ըստ այդմ՝ հայկական տարազը ոչ միայն զգեստ է, որ մարմին է ծածկում, այլև իր մեջ ամփոփում է մի ողջ ազգի հավատալիքային սովորույթներ և տեղային ավանդույթներ:

Երկօրյա գիտաժողովի վերջին զեկուցողի՝ Տաթևիկ Ավետիսյանի (հեղինակ, թարգմանիչ, Հաքաուաթի մշակութային ՀԿ) հեղինակային ստեղծագործությունը շատ մեծ տպավորություն թողեց հանդիսատեսների հոգուն ու մտքին: Հեքիաթ-պատումի հերոսը՝ Հրե աղջիկը, արևի հրվիժակից անցնում է երկրային հրի, իսկ այնուհետև՝ սիրո լույսի փոխակերպմանը: Գիրքը նախատեսված է 7+ տարեկան երեխաների և մեծահասակների համար: Պատումը նպատակ ունի զարգացնելու երեխաների թե՛ ռացիոնալ, թե՛ զգայական ինտելեկտը, սովորեցնում է ճանաչել ներաշխարհը և արտաքին աշխարհը, խրախուսում է լինել հետաքրքրասեր և ապրումակցող:

Վերջում գիտաժողովն ամփոփեց իր աշխատանքը և հաջողություն մաղթեց հեքիաթագիտական հաջորդ գիտաժողովի իրականացման աշխատանքներին:

«Այն ամենը, ինչին նայում ես, կարող է հեքիաթ դառնալ, և դու կարող ես պատմություն կերտել այն ամենից, ինչին դիպչում ես»,- ասել է Անդերսենը:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՆՔՆԱԶՐՈՒՅԺ-ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5 ☜ ***Մանկավարժական գործունեություն. ի՞նչ ձեռքբերումներ եմ ունեցել***

Չորս տասնամյակից ավելի մանկավարժական գործունեությունս իրականացրել եմ Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի:

Այդ տարիներից 15-ը անցկացրել եմ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի պաշտոնում: Աշխատանքային գործունեությունս եղել է շատ հարուստ ու բովանդակալից, առատ՝ հետաքրքիր անակնկալներով: Գուցե դա է եղել հիմնական պատճառը, որ այդ տարիներն անցել են մի վայրկյանի թռիչքով: Պարգևատրվել եմ բազմաթիվ պատվոգրերով ու շնորհակալագրերով՝ սաներիս՝ տարբեր թեմաներով ստեղծագործական շարադրությունների մրցույթներում (համարյա ամեն տարի), օլիմպիադաներում մրցանակային տեղեր գրավելու, մասնագիտական խոր պատրաստվածության, սովորողներին կայուն գիտելիքներ հաղորդելու համար:

2002թ. մասնակցել եմ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին, շրջանում հաղթող ճանաչվել, իսկ հանրապետական փուլում «Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մակարդակը» անվանակարգում հաղթել՝ արժանանալով ԿԳ նախարարության պատվոգրի և դրամական պարգևի:

2005-2006 ուստարում երկու փուլով մասնակցելով Երևանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի կազմակերպած արևմտահայերենի դասընթացներին՝ հաղթող եմ ճանաչվել և իրավունք ստացել 2006-2007 ուստարում արևմտահայերենի դասեր վարել Խնապատի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում:

2012-ին մասնակցել եմ Երևանում կազմակերպված լավագույն ուսուցիչների մրցանակաբաշխությանը՝ «Տաշիր գրուպ» ընկերության կողմից արժանանալով դրամական պարգևի: 2013թ. ուսուցիչների ատեստավորման արդյունքում ԿԳՄՍ նախարարության կողմից ինձ շնորհվել է տարակարգ:

2014 թվականի հունվարին ԼՂՀ-ին մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար պարգևատրվել եմ ԼՂՀ վարչապետի հուշամեդալով: Հաջողություններն ու պարգևները երբեք չեն ինքնահանգստացրել ինձ, այլ խթանել են իմ գործունեությունը, ու ես ձգտել եմ նորանոր հաջողություններ գրանցել:

2014թ. սեպտեմբերին անցել եմ թոշակի, բայց հետագա տարիներին աշխատել եմ և՛ հարազատ դպրոցում, և՛ Ասկերանի միջնակարգ դպրոցում, որտեղ ինձ վերաբերվել են ամենայն հարգանքով ու սիրով: Այդ կարճ ժամանակը բավարար է եղել՝ ճանաչելու ուսուցիչների մի հզոր բանակի, որտեղ բոլորն աշխատում էին խղճի մտոք ու բարձր պատասխանատվությամբ:

Այլ աշխատանքներ

Մանկավարժական գործունեությանը զուգահեռ զբաղվել եմ նաև ստեղծագործական աշխատանքով: Գիտակրթական, մանկավարժահոգեբանական բազմաթիվ հոդվածների հեղինակ եմ, Արցախի ժուռնալիստների միության անդամ: Կատարել եմ նաև հասարակական աշխատանքներ. Կարմիր Խաչի կողմից լիազորված եմ եղել տարբեր դպրոցներում դասախոսություններ կարդալու «Մարդը՝ մարդուն» թեմայով, եղել եմ կրթության բաժնին կից «Անչափահասների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի անդամ, արտահաստիքային տեսուչ և այլն: Հանդես եմ եկել ԼՂՀ ռադիոյի և հեռուստատեսության տարբեր հաղորդումներում ու հարցազրույցներ տվել:

Երբ ինձ թոշակի ուղարկեցին, շատ մեծ ողբերգություն ապրեցի. թվում էր՝ աշխարհի վերջն է: Ամիսներ շարունակ առավոտները կանգնում էի մեր ցանկապատի մոտ ու դպրոց ճանապարհում աշակերտներին և ուսուցիչներին: Կարոտը խեղդում էր ինձ: Չէ՞ որ ես դեռ շատ բան ունեի փոխանցելու մատաղ սերնդին: Անարդարության դեմ բողոքներս մնացին անարձագանք:

Գուցե ինչ-որ տեղ չգնահատված կամ չհասկացված եմ եղել, փույթ չէ, քանզի մշտապես վայելել եմ սաներիս ու նրանց ծնողների անկեղծ սերն ու խոր հարգանքը, որն ինձ համար ավելին էր, քան բոլոր տեսակի պետական կոչումները:

«Փրկությունս» հայտնվեց անսպասելի: Ստեփանակերտում պատահաբար հանդիպեցի «Լուսարար» թերթի գլխավոր խմբագիր Սվետլանա Խաչատրյանին, որն ինձ առաջարկեց թերթի սրբագրիչի պաշտոնը, ինչն էլ մեծ սիրով ընդունեցի, չնայած ներքուստ շատ էի կարոտում դպրոցը:

Արցախյան պատերազմները և հետևանքները

Դժբախտաբար ինձ վիճակված է եղել ապրել անցյալ դարի 90-ականներից մինչև 2023-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի բոլոր արհավիրքները:

88-ի շարժումը դարձավ ողջ հայության արժանապատվության ու աննկուն ոգու վառ դրսևորումը: Մեր միասնական պայքարը պատմական արդարության վերականգնման համար էր: Այդ պայքարի դեմ անզոր եղան բոլոր տեսակի սադրանքները, ու մենք հաղթեցինք թշնամուն՝ պարտադրելով նրան մեր կամքը: Դա պահանջեց հազարավոր կյանքեր: Նրանց անունները ոսկե տառերով գրվեցին մեր նորօրյա պատմության էջերում:

1990-ականների, 2016-ի, 2020-ի մարտական գործողությունների տարեգիրն էի դարձել: Օրագիր էի պահում, որի էջերը ողողված էին մեր նահատակների սուրբ արյունով ու մեր դառը արցունքներով: Ցավոք, ես այդ ամենը կորցրի 2023-ի սեպտեմբերի 19-ին, երբ մեզ տեղափոխեցին Ստեփանակերտի օդանավակայան, ու այլևս հնարավորություն չունեցա տուն վերադառնալու ու փրկելու այդ սուրբ մասունքները: Ամեն ինչ մնաց թշնամուն:

Առաջին պատերազմից հետո, երբ որոշակիորեն խաղաղվել էինք արդեն, սկսեցի գյուղի՝ պատերազմում աչքի ընկած ազատամարտիկների պատմությունների հիման վրա հրապարակումներ անել՝ ներկայացնելով նրանց սխրանքներն ու քաջագործությունները: Որոշ ժամանակ անց միտք հղացավ՝ մի ամբողջական գրքով ներկայացնել Խնապատի հերոսական վաշտի տղաների (զոհված թե ողջ) մասին համապարփակ պատմությունը՝ ականատեսների վկայություններով: Այցելեցի բոլոր ազատամարտիկների օջախները, պատմություններ ու լուսանկարներ հավաքեցի հնարավորության սահմաններում՝ ամփոփելու մեկ գրքի մեջ՝ սերունդներին պահ տալով այդ հերոս տղաների հերոսական մաքառումները:

Գտնվեցին մարդիկ, որ սկզբում խոստացան հովանավորել գրքի տպագրությունը, իսկ երբ ամեն ինչ արդեն պատրաստ էր, դրժեցին իրենց խոստումը: Հույսս չեմ կտրում, սպասում եմ բարի մարդկանց աջակցությանը:

Դրանից հետո եղավ 2016-ի քառօրյան, հետո՝ ահավոր 2020-ը, իսկ վերջում՝ 2023-ի սեպտեմբերը, որը վերջնականապես խաչ քաշեց բոլորիս ճակատագրերին…

Երեսուն տարիների փայփայած մեր Անկախությունը, մեր երազանքները մեկ վայրկյանում փուչիկների պես պայթեցին մեր գլխին: Դա նրանից է, որ մենք «դափնիների վրա հանգստացող» ազգ ենք, չգնահատեցինք մեր մեծ հաղթանակը ու այն պահպանելու քայլեր չձեռնարկեցինք հետագա տարիներին: Ասում են՝ ժողովուրդը երբեք չի սխալվում, բայց մենք չարաչար սխալվեցինք ու կորցրինք մեր թանկ հայրենիքը: Ավելին, դարձանք հայրենազուրկ ու փախստական բազմաչարչար հայրենի հողի վրա: Սա այն ահավոր իրականությունն է, որ նույնիսկ ամենաչար երազում էլ հնարավոր չէ տեսնել:

Այսօր էլ շարունակում եմ Արցախի հոգս ու ցավով ապրել և գրչով մարտնչել նրա լուսավոր ապագայի համար:

Հուսանք, որ այս ծանր ժամանակները պատվով կհաղթահարենք, ու կհայտնվի այն նախանձախնդիր առաջնորդը, որը երկիրը կտանի վերելքի ու բարգավաճման ճանապարհով:

Շնորհակալ եմ, որ համբերատար հետևեցիք այս երկարաշունչ պատմությանը:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ

ԻՐ ԵՐԿՐԻ ՀԱՎԵՐԺ ԶԻՆՎՈՐԸ՝ ԼԵԳԵՆԴԱՐ ՃՈՒՏԸ

Մեր հերոսները միայն պատմության էջերում գրված անուններ չեն: Նրանք մեր իրական կյանքում ապրած մարդիկ են, որոնք ծնվեցին մեր կողքին: Նրանք էլ սովորում էին դպրոցներում, քայլում էին նույն փողոցներով, երազում էին խաղաղ ապագայի մասին: Նրանք ունեին իրենց մանկության ուրախ հիշողությունները, առաջին սերը, ընտանեկան տաք սեղանը: Բայց ամեն ինչ թողեցին մի կողմ, երբ հայրենիքը կանչեց:

Վառ օրինակ է «Լուսարար»-ի տարեսկզբյան էջերում պատվավոր տեղ ունեցող հերոսի կերպարը, որն ավելի շատ հայտնի է մարտական ընկերների կողմից իրեն վերագրված՝ «Ճուտ» մականվամբ: Թե ինչո՞ւ են լեգենդար հերոսին կնքել այդ մականունով, հասկանալի է դառնում նրա կերպարին ծանոթանալու հենց սկզբից: 16 տարեկան էր, երբ հայրենիքը վտանգված էր, իսկ նրա աչքերում կար միայն մի բան՝ հայրենիքի նկատմամբ սեր ու պարտք: Չնայած տարիքային անհամապատասխանությանը, միացավ ռազմաճակատ մեկնող ընկերներին եւ արդեն մարտական ընկերների կողմից ստացավ այդ մականունը, որը խորհրդանշում էր նրա տարիքով փոքր լինելը:

Մեր Վոլոդյայի Հարությունյանը ծնվել է 1973 թվականի նոյեմբերի 17-ին Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում:

Փառավոր է նրա սխրանքներով լի մարտական ուղին: 16 տարեկանից ակտիվ մասնակցություն է ունեցել 1988-1994 թվականներին տեղի ունեցած Արցախյան ազատամարտին: Ռազմաճակատ մեկնած մարտական ընկերներից ամենափոքրն էր, որի համար էլ ստացել է «Ճուտ» մականունը: 1990 թվականի հունվարին մասնակցել է Երասխավանի ինքնապաշտպանությանը, իսկ փետրվարին՝ Վարդենիսի, Նոյեմբերյանի եւ Բերդի պաշտպանական մարտերին:

Հայոց ազգային բանակի (ՀԱԲ) լուծարումից հետո՝ 1990 թվականի նոյեմբերին, 17 տարեկան հասակում անցել է Հայ Յեղափոխական Դաշնակցության շարքերը, իսկ 1991 թվականի ապրիլի առաջին օրերին մեկնել է Գետաշեն, որտեղ էլ ծանոթացել է Թաթուլ Կրպեյանի, Պետրոս Ղեւոնդյանի եւ Կարոտ Մկրտչյանի հետ: Թաթուլ Կրպեյանի զոհվելուց եւ Գետաշենի անկումից հետո կարողացել է Գետաշենից դուրս բերել զոհված ընկերների մարմինները եւ ողջ մնացած մարտիկներին՝ փրկելով նրանց անխուսափելի գերությունից: Այնուհետեւ եղել է Շահումյանում, որտեղ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը Շահեն Մեղրյանն էր: 1992 թվականի փետրվարին՝ Մալիբեյլի գյուղի ազատագրման ժամանակ երեք անգամ վիրավորվել է, ապաքինվելուց հետո վերադարձել շարք եւ դարձել Շուշիի առանձնակի գումարտակի անդամ:

Մասնակցել է Սրխավենդի պաշտպանությանը, Բերձորի, Քարվաճառի, Մարտակերտի, Վարանդայի, Սանասարի, Կովսականի եւ Ակնայի ազատագրական մարտերին: 1994 թվականին Կարախանբեյլիում Ալբերտ Ալավերդյանի ծանր վիրավորվելուց հետո նրան դուրս է բերել մարտադաշտից եւ շարունակել մարտը՝ պահելով դիրքերը մինչեւ օգնություն ստանալը: Մինչեւ 1998 թվականը ծառայել է Հայաստանի զինված ուժերում, որից հետո զորացրվել է:

Մասնակցել է նաեւ 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմին, եղել է առաջնագծում եւ 42 օրից ավելի մարտական հերթապահություն է իրականացրել:

Հավատարիմ դաշնակցականի իր երդմանը՝ Մեր Հարությունյանը հայրենիքի պաշտպանությունից անմասն մնալ չէր կարող նաեւ 2020-ի 44-օրյա պատերազմի ժամանակ: 2020 թվականի 44-օրյա պատերազմի առաջին օրերին կամավորագրվել է ՀՅԴ «Կամավորական շարժում» ՀԿ-ին, եւ, որպես երկրորդ վաշտի հրամանատար, հոկտեմբերի 2-ին մեկնել է Արցախ ու հոկտեմբերի 4-ից միացել մարտական գործողություններին, մասնակցել Մարտակերտի շրջանի պաշտպանական մարտերին: Հոկտեմբերի 6-ին, ժամը 14:00-ի սահմաններում, Արցախի պաշտպանության բանակի հատուկ նշանակության ստորաբաժանման եւ «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի ակտիվ մասնակցությամբ, որը ղեկավարել է Մեր Հարությունյանը, հյուսիսային ուղղությամբ կազմակերպվել է հակագրոհ եւ կեսգիշերին մոտ հետ է վերադարձվել Մարտակերտի շրջանում գտնվող՝ Մարտակերտի եւ «Եղնիկներ»-ի համար ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող՝ Վարանկաթաղ գյուղի հարակից համանուն բարձունքը:

Զոհվել է ազատագրումից ժամեր անց՝ մարտական ընկերներին օգնելու ժամանակ:

2021 թվականի ապրիլի 14-ին, Արցախի Հանրապետության նախագահի կողմից՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հակառակորդի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում Արցախի պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած բացառիկ քաջության ու արիության համար հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Իր երկրի հավերժ զինվորը, Շուշիի առանձնակի գումարտակի լեգենդար Ճուտը հանգչում է Եռաբլուրում: Իր մարտական ուղու մասին խոսելիս՝ նա համեստաբար ասում էր. «Իմ երկրի հավերժ զինվորն եմ»:

Հերոսների հիշատակը պատիվ է պահանջում: Պահանջում է, որ մենք ապրենք արժանապատիվ, լինենք միասնական, սիրենք իրար, ու պահենք այն արժեքները, որոնց համար նրանք ընկան: Պահանջում է, որ երբեք չմոռանանք նրանց անունները, նրանց ժպիտները, նրանց թափած արյունը:

Հոգեբանական

ՍԵՓԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ

Արտակարգ իրավիճակներում (ինչպիսին են՝ պատերազմը, բռնատեղահանությունը, ընտանիքի անդամի մահը) էապես փոխվում է այն իրականությունը, որում մենք ապրում ենք, կառուցում մեր առօրյան, կազմում ապագայի ծրագրեր: Նման իրավիճակներն ուղեկցվում են անընդհատ եւ տեւական անորոշությամբ, անկայունությամբ, բացասական լուրերի հոսքով, հոռետեսական կանխատեսումներով, կենցաղի եւ առօրյայի կազմակերպչական հարցերի կտրուկ փոփոխություններով: Որպես հետեւանք՝ նման դեպքերում հաճախ առաջանում են տարբեր բացասական զգացողություններ եւ ապրումներ, որոնք առավել սուր կարող են արտահայտվել ծնողների մոտ, որոնք պատասխանատվություն են կրում ոչ միայն իրենց, այլեւ իրենց երեխաների առողջության եւ կյանքի համար: Օրինակ՝ տագնապայնություն, անհանգստություններ, մտահոգություններ, տխրություն, ընկճվածություն, տրամադրության տատանումներ, դյուրագրգռություն, բարկություն, զայրույթի պոռթկումներ, վախեր՝ երեխաների առողջության եւ կյանքի համար, հուզական սպառվածություն, հյուծվածություն, հոգնածություն, ֆիզիկական գանգատներ, քնի եւ սննդի ընդունման հետ կապված խնդիրներ: Նման դրսեւորումները, անգամ դրանց սուր արտահայտվածությունը կամ մեծ ինտենսիվությունը համարվում են նորմալ կամ բնական այս ոչ սովորական, ոչ բնականոն իրավիճակում: Չնայած դրան, այս դրսեւորումները կարող են բացասաբար անդրադառնալ ծնող-երեխա փոխհարաբերությունների վրա՝ խաթարելով դրական, առողջ ծնողավարության գործընթացը:

Իսկ ինչպիսի՞ բացասական դրսեւորումներ կարող են դիտվել երեխաների եւ դեռահասների մոտ արտակարգ իրավիճակում. անհանգստություն, տագնապներ, վախեր, վարքում կտրուկ, անսպասելի փոփոխություններ, օրվա ռեժիմի խաթարում, քնի եւ սննդի ընդունման հետ կապված խնդիրներ, խուսափողական վարք, կպչուն սովորություններ՝ կրկնվող գործողություններ, մտքեր, օրինակ՝ եղունգ կրծելը, կենտրոնանալու եւ ուսման հետ կապված դժվարություններ, ագրեսիվ վարք, զայրույթի պոռթկումներ, կտրուկ փոփոխություններ միջանձնային փոխհարաբերություններում, իրավիճակը սթափ ու օբյեկտիվորեն ընկալելու եւ գնահատելու անկարողություն՝ երբ է ինչ-որ բան վտանգավոր, երբ՝ ոչ, կյանքի վերահմաստավորում՝ հատկապես դեռահասների դեպքում:

Երեխաների հակազդումը սթրեսին, վշտի արտահայտման եղանակները տարբերվում են մեծահասակներից: Այս տարբերությունը երբեմն մեկնաբանվում է, թե երեխաները արագ են մոռանում եւ հարմարվում են: Դա այդպես չէ, թեեւ որոշ երեխաներ կարող են ցույց չտալ իրենց զգացմունքները, ոչ էլ արտահայտել իրենց վիշտը բառերով: Երեխաների վիշտը կարճ է տեւում, սակայն արտակարգ իրավիճակը կարող է ավելի երկարատեւ ազդեցություն ունենալ երեխաների վրա, քան մեծահասակների:

Կորստի հետ կապված սթրեսից հետո երեխաների վիշտը հաճախ կտրուկ է, եւ նրանք կարող են ուժեղ վշտի հակազդումից արագորեն անցնել խաղի եւ զվարճանքի: Գրեթե բոլոր երեխաները խաղում են, նույնիսկ եթե նրանք սուր սթրեսային իրավիճակով են անցել:

Փոքրերը կարող են իրենց ագրեսիվ պահել խնամակալների կամ այլ երեխաների հանդեպ՝ միեւնույն ժամանակ կառչել իրենց խնամակալներից եւ բաժանման վախի նշաններ ցույց տալ: Հնարավոր են վարքագծի փոփոխություններ, օրինակ՝ ռեգրեսիա դեպի կրտսեր երեխաների վարքագիծ, ինչպիսին են գիշերամիզությունը, բութ մատը ծծելը կամ միայնակ չքնելը: Սրանք վստահության կորստի մասին վկայող ազդանշաններ են: Նման իրավիճակներում շատ կարեւոր են կայուն եւ անվտանգ հարաբերությունները:

Ավելի մեծ երեխաները կարող են սթրեսի նշաններ ցուցաբերել, օրինակ՝ խուսափել ընկերների եւ մեծահասակների հետ շփումից, ունենալ տրամադրության անկում: Դեռահասները կարող են վարվել մեծահասակների նման, օրինակ՝ մեկուսանալ կամ դառնալ դյուրագրգիռ եւ ագրեսիվ: Կարեւոր է հիշել, որ երեխաների արձագանքը սթրեսին նորմալ է: Բացատրեք սա երեխաներին, եթե նրանք չեն հասկանում իրենց դրսեւորումները կամ դժվարանում են ղեկավարել դրանք:

Երեխաներն ունենում են ճգնաժամային իրավիճակներին տրվող ընդհանուր հակազդումներ: Մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ որոշ երեխաներ ունենում են բարդացված հակազդումներ կամ հայտնվում են դժվար իրավիճակում, երբ հոգեբանական անհետաձգելի օգնություն տրամադրողի համար դժվարանում է օգնության ցուցաբերումը: Երեխաները բարդացված հակազդումներ են ունենում սովորաբար այն պատճառով, որ նրանց խնամակալները հասանելի չեն կամ չեն կարող հոգ տանել իրենց մասին:

Երեխաների բարդացված հակազդումների բնորոշ նշաններ են՝ մարդկանցից օտարացումը, ուտելու կամ խմելու մերժումը, որեւէ մեկի կամ որեւէ բանի նկատմամբ հետաքրքրության բացակայությունը, համառ եւ շարունակական ագրեսիվ կամ անզուսպ վարքագծի դրսեւորումը:

Ավելի մեծ երեխաները կարող են ունենալ նույն հակազդումները, ինչ մեծահասակները ճգնաժամային իրավիճակներում: Դրանք են՝ երկարաձգված վիշտը, խուճապային գրոհները, դեպրեսիան, զայրույթը եւ ագրեսիվ վարքը, ինքնավնասումը կամ ինքնասպանության մասին մտքերը:

Հաշվի առեք, որ գոյություն ունի ուղիղ կապ երեխայի եւ ծնողի հուզական վիճակների միջեւ, ուստի երեխաների այս վիճակների արտահայտվածությունն ու ինտենսիվությունը կախված են նաեւ ծնողներից: Անգամ եթե ծնողները չեն խոսում իրենց զգացմունքներից կամ փորձում են թաքցնել դրանք, երեխաները զգում են իրենց շրջապատող լարվածությունը: Արդյունքում առաջանում է արատավոր փակ շրջան:

Դիտարկենք օրինակով: Ծնողի հաճախ չգիտակցվող հուզականությունն ու լարվածությունը կարող են դրսեւորվել սովորական իրավիճակներում անտեղի բուռն հուզական արձագանքներով, որոնք ոչ թե շտկում են իրավիճակը, այլ առավել սրում: Կարեւոր է, որ, որպես ծնողներ, մենք կարողանանք ճանաչել եւ հասկանալ արտակարգ իրավիճակին թե՛ մեր, թե՛ մեր երեխաների հնարավոր արձագանքները: Այդ արձագանքների ճանաչումը մեզ հնարավորություն կտա կառավարելու դրանք եւ, առավել կառուցողաբար արձագանքելով, օգնելու երեխաներին, որ հնարավորինս անվնաս հաղթահարեն այդ իրավիճակը:

Այսպիսով՝ արտակարգ իրավիճակներում երեխաներին օգնելու համար ծնողները նախ պետք է հոգան սեփական հոգեբանական բարեկեցության մասին:

Արցախի երեխաների՝ հատկապես բռնատեղահանված երեխաների հոգեբանական կայունության վերականգնման համար անհրաժեշտ է նաեւ ապահովել նրանց մասնակցությունը զանազան միջոցառումների, որոնք միտված են թեկուզ մի քանի ակնթարթ հեքիաթային առօրյա պարգեւելու: Ցավոք, պատերազմի հետեւանքները ամենաբացասական ազդեցությունն ունենում են հենց երեխաների վրա, ու յուրաքանչյուրիս պարտականությունն է մեր գործողություններով թեւ ու թիկունք լինել մեր երեխաներին, անել այնպես, որ հաղթահարեն պատերազմի թողած վերքերն ու վայելեն անհոգ մանկություն:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները:
Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 30.01 2026.թ.: